ԲԱԳՈՒՄ արմատք ԵՆ ՅԵՐԿՐԻ, ՎԵՐ ՀՄՈՒՄՔ Ի ԲԺԵՐ-
ԿԱԳ ԿԵՆԱԳ ՊԵՂՍ առնեն :

ՅԱՄԵՆԱՅՆԷ՝ ՅՈՒՐԱ ՕՐԵՆՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՐԱԺԱՐԵցու-
ցանեն ՊՄԵՊ, պարտ է ԺՈՒԺԿԱԼ լինել :

Զ. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆՆ ԻՐ ՅԱՐԱԲԵՐԵԱԼԷՆ ԵՄՔԸ ԿՐ
ՊՐՈՒԻ, ԻՆՉԱՊԷՍ յայտնի Է աշխարհաբառէն ու ՎԵՐԸ¹
ԲԵՐՈՒԱԾ օրինակներէն : Բայց գրաբառ երբեմն ԸՆՏԻՐ
ԴՐՈՒԱԾՆԵՐՈՒ ՄԵջ յառաջ ալ ԿՐ ՊՐՈՒԻ :

ՈՐ ՔԱՆ ՊԱՄԵՆԱՅՆ ՄԿԱՐ Է ԹԵՂՄ-, ՊԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ
պատուէ . այս ինչն՝ մեղու որ քան ՊԱՄԵՆԱՅՆ
ՄԿԱՐ Է :

ՄԵՂՄ-Ն՝ ՄԻ ԱՄԵՆԻՆ ԹԻԱՐ Է, ՀԱՄ ԱՉԽԱՄՔԻԼ ԷՐ ՄԵՐԷ .
ԱՐԸ, ՔԻ ՀԵՎԻՍԻՆՈՒԵՆ ՊԻԱՏԵ ՊԱՅՐՓ (պիր ՀԱՅՎԱՆ)
ՄԸՐ, չօդ չալըշմայր սէվէր :

ՈՉ ապաքէն աշխարհս ԱՍՏՈՒԾՈՅ Է, Եւ ՄԻ ԻՆՆ ՄԻԱՆ-
ԳԱՄ յաշխարհի ՎԱՐԵԼՈՒՆԻ-ՆԻ-ՆԻ+ . այս ինչն՝ ՎԱՅԵԼԸՌ-
ԹԻՒՆՔՆ, որք ԵՆ յաշխարհի :

Երկինք եւ երկիր եւ ո՞ր ի սմա լինելո-նի-ն+ , որպէս
թէ գրով եւ բանիւ պատմեն զփառս Աստուծոյ .
այս ինչն՝ երկինք եւ երկիր եւ լինելութիւնք՝ որք
են ի սմա :

Եթէ փառաւորի մի անդամն , խնդան ամենայն ան-
դամքն ընդ նմա , ասէ , ո՞ր Քրիստոսիւն խօսէր Պա-
ռուս . այս ինչն՝ ասէ Պառոս , որ Քրիստոսիւն խօ-
սէր * :

Է . Երբեմն յարաբերեալը զօրութեամբ կը դրուի ,
ու յարաբերականը յարաբերեալին հոլովը կ'առնէ , ինչ-
պէս վերը (ԵԵ 174.) յատկացուցչին վրայ ըսինք :

Որում խնդրէ ի քէն , տուր . այս ինչն՝ տուր այնմ՝
որ խնդրէ ի քէն :

Ու ո՞ր ժեղմէ (բան ճը) է' ու-պէ՝ պուր .

Քիմ քի սէնտէն (պիլ շէյ) խթէրսէ , վէր :

Որ բամբասէ՝ կորուսանէ եւ զանձն իւր եւ պուր լսենն
ի նմանէ . այս ինչն՝ կորուսանէ եւ զանձն իւր , եւ
այնոցիկ որք լսեն ի նմանէ :

Կինիցիս միայնակեաց եւ ապաշխարեսցես վասն ո՞րոց
գործեցեր . այս ինչն՝ ապաշխարեսցես վասն մեղաց
զոր գործեցեր :

Որո՞ր լսեն եւ չպահեն ի մտի , մեղադրէ սաստիկս .

* Երբ որ այսպէս յարաբերականն իր յարաբերեալէն յառաջ
դրուելու ըլլայ , շատ անդամ հոլովը կը փոխէ , ինք յարա-
բերեալին հոլովը կը դրուի ու յարաբերեալն ալ յարաբերա-
կանին . ինչպէս ,

Մարդիկ մտաւորք եւ բանաւորք տեսանելով զերկինս եւ
զերկիր , եւ ո՞ր ի նոսա սքանչելադործութիւնք , փառաւորեն
զարարիչն . այս ինչն՝ տեսանելով զերկինս եւ զերկիր , եւ
զքանչելադործութիւնս՝ որ են ի նոսա . եւ այլն :

Հայելով յաշխարհիս մասունս , եւ ո՞ր ի նոսա զանազա-
նութիւնը են , զարուեստապէտն գովեսցուք վասն իմաստու-
թեան հանձարոյ . այս ինչն՝ հայելով ի մասունս աշխարհիս ,
եւ ի զանազանութիւնս՝ որ են ի նոսա . եւ այլն :

Զո՞րս վասն կռոնոսի եւ Արամազդայ պատմութիւնք իցեն ,
ամաշեմ ասել . այս ինչն՝ ամաշեմ ասել զպատմութիւնսն որ
վասն կռոնոսի եւ Արամազդայ :

այս ինքն՝ սաստիկս մեղադրէ այնոցիկ որ լսեն եւ
չպահեն ի մտի * :

Ը. Երբեմն յարաբերականին եղակին յողնակիի
տեղ կը գործածուի, մանաւանդ ուղղականի ու հայցա-
կանի մէջ :

Ու ի հանգստեան են, գուն ուրեք յիշեն զԱստուած .

այս ինքն՝ որք ի հանգստեան են . եւ այլն :

Ուն+ որ հանդստի մէջ են, զԱստուած +իւ իւ յէշն .

Բահաթլուդ իշխնտէ օլանլար Ալահը փէք սէյլէք խա-
թըրլարընա կէթիրիրլէք :

Եթէ զառաջինսն զոր ասացաք, յանձին ցուցանեմք .

այս ինքն՝ զորս ասացաք:

Իմաստութիւն զորդիս իւր բարձրացոյց, եւ պաշտպան

լիցի այնոցիկ՝ որ խնդրեն զնա . այս ինքն՝ այնոցիկ
որ+ խնդրեն եւ այլն :

Թ. Յարաբերական դերանունն երբ որ սեռական
հոլով կը դրուի կամ յատկացուցիչ կ'ըլլայ, իր յատ-
կացեալէն կամ յարաբերեալէն յառաջ դրուելուն հա-
մար շատ հեղ իր վրան ալ նախդիր կը դրուի :

Ո՞չ սա է Յիսուս, զորոյ մէք զիտեմք զնայր եւ զնայր .

Աս Յէսուսը չէ՞ մի, որուն մէն+ հայրը մայրը նիտեն+ .

Խսա պու տէյիլ մի տիր, քի պիզ օնուն փէտէրինի
վէ վալիտէսինի թանըրըզ :

* Երբեմն յարաբերեալը յարաբերականին հետ կը համաձայնի .
ինչպէս :

Զամենայն ինչ զոր ատէ Տէր, բնակէ յանձինս վատաց եւ
անխրատից . այս ինքն՝ ամենայն ինչ զոր ատէ Տէր . եւ այլն :

Երբեմն ալ յարաբերականը յարաբերեալին հետ կը հա-
մաձայնի .

Զդէր Աէմէի քարինս Դաւթի եւ ամենեցուն՝ որոյ ընդ
արքային Դաւթի . այս ինքն՝ ամենեցուն որք էին ընդարքային
Դաւթի :

Երբեմն յարաբերեալը յարաբերականէն յառաջ ալ, վերջն
ալ կը կրկնուի, կամ յարաբերեալին նշանակութեամբ ուրիշ
բառ մըն ալ կը դրուի :

Եհան երկիր բանջար խոտոյ, որոյ սերմն իւր ի նորին :

Յորոց եւ իմաստունքն տեղի տուեալ վախչին ի նոյտանէ :

Գտանէք յաւանակ մի, յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ :

Վայ մարդոյն այնմիկ, յոյր յեւն գայցէ գայթակղութիւն :

Այսպէս կ'ըսուի նաեւ լորոյ շեմբյ առնուն . լորոյ լունի առնունք :

Ժ . Յարաբերական դերանունն էական բայով մասնական անուան ուժ կ'ունենայ, ինչպէս աշխարհաբառալ կ'ըսենք . Մարդ իսյ որ պանիր նիւրնար առաւել, իբր թէ ըսել է, աճան :

Ի միոյ հօր որդիս՝ է որ հնազանդ եւ հպատակ է հօրն, եւ է որ չարագոյն քան զսատանայ .

Մէկ հօր զա-իւներուն մէջ՝ իսյ որ հօրը հնազանդ է, իսյ աւ որ սարտանայէն աւ լոր է .

Պիր փէտէրին էվլատլարնըն իշխնտէ, պազրսը պուլունուր քի փէտէրինէ միւթի օլսուն, պազրսը տա պուլունուր քի շէյթանտան զիատէ քէօթիւ տիւր : Ի տան մեծի էն անօթք՝ որ ի պատուի են, եւ էն որ յանարդութեան :

Սողնոց՝ զիսօշիւն միայն զմարդոյն առեալ, է որ ի ծակս, է որ ի սորս, եւ է որ ընդ փապարս երկրի մտեալք զօղեն :

ԺԱ . Երբեմն էական բայը ներդործութեամբ չիդրուիր :

Ժողովեցին, որ շատ, որ սակաւ . այս ինչն՝ էր որ շատ, եւ էր որ սակաւ :

Ուը շատ որը էւն ժողովեցին .

Պազրլարը չօգ, պազրլարը ազ տէվշիրտիլէր :

Հանապաղ մեղանչեմք, որ խորհրդով, որ բանիւ, որ լսելով, որ տեսանելով :


ԺԲ . Շատ տեղ յարաբերական դերանունն ու իր բայը զօրութեամբ կը դրուին :

Ետես Յիսուս այր մի Մատթէոս անուն . այս ինչն՝ որոյ անուն էր Մատթէոս :

Բողբոջ է առ Աստուած խաղաղութեան՝ առ եղբարսն խաղաղութիւն . այս ինչն՝ խաղաղութիւնն՝ որ լինի

առ եղբարս, և բողբոջ խաղաղութեան որ լինի առ
Աստուած :

Փայտն զդործով մեղսն, եւ եղէդն զբանիւ յանցանսն
ցուցանէ . այս ինչն՝ փայտն ցուցանէ զմեղսն՝ որ լինին
գործով, եւ եղէդն՝ զյանցանսն՝ որ լինին բանիւ :



Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ

ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴԵՐԸ ՅՈՒՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ա . ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴԵՐԸ , դ , ն , դերանուններուն
արմատն են : Ասոնցմէ ա՝ առաջին դէմը, դ՝ երկրորդ դէմը,
ն՝ երրորդ դէմը կը ցուցընէ , ինչպէս առաջին մասին մէջ
(Երես 34 .) ըսինք :

Ա . Դիմորոշ յօդերն երեք կերպով կը բանին :

Բ . ԱՌԵՋ մը էական դերանուան տեղ , ինչպէս ,
Ոչ բաւեմք արարածքս զարարչէն պատմել . այս ինչն՝
մեջ արարածքս .

ՉԵՆ+ իրնար մեն+՝ ո՞ր արարած են+ , արարչն վրայ պատմել :
Պիզ քի եարատըմը ըզ , եարատըմըտան էօթիւ-
րիւ նադլ էթմէյէ գատըր տէյիլիզ :

Պարտ է մեզ՝ որք կարողքս եմք , բառնալ զտկա-
րութիւն հիւանդաց . այս ինչն՝ մեք՝ որ կարող եմք :
Ինձ հօրս լուարուք , որդեակք . այս ինչն՝ ինձ որ
հայր եմ :

Զարթուցեալքս ի հանգստենէ քնոյ , աշիւ եւ դո-
ղութեամք կացցուք յաղօթս . այս ինչն՝ մեք որ
զարթեաք ի հանգստենէ քնոյ :

Մի հեղգասցուք մեղաւորքս դառնալ առ Աստուած .
այս ինչն՝ մի հեղգասցուք մեք՝ որ մեղաւոր եմք ,
դառնալ առ Աստուած :

Նախատինք եղաք քրիստոսի քրիստոնեայքս . այս ինչն՝
մեք որ քրիստոնեայ եմք :

Եթէ զայս պաշտօնեաք « Քրիստոսի առնեմք , ապա
զի՞նչ ինչ ոչ այլքն առնիցեն . այս ինչն՝ մեք որ
պաշտօնեայ եմք Քրիստոսի :

Ինչպէս աս օրինակներէն կ'երեւայ , շատ անգամ
այսպիսի խօսքերուն մէջ էական բայն ու յարաբերական
դերանունը զօրութեամբ կ'իմացուին :

Գ. Հուցական դերանուան տեղ :

Սիրելով զմիմեանս կատարի խաղաղութիւն աշխարհիս .

այս ինչն՝ խաղաղութիւն այսր աշխարհի :

Մէկուն սէրելով առ աշխարհունք խաղաղութիւնը դեղը ին-
ժայ .

Պիրիպիրիմիզի սէվմէյիլէ տիւնեանըն բահաթլըզը
թէքմիլ օլուր :

Նիւթականս հուր ի նիւթոցն նուազեալ շիջանի . այս
ինչն՝ այս նիւթական հուր . եւ սյլն :

Նախ արարածքն եղեն , եւ ապա մարդն ստեղծաւ .

այս ինչն՝ նախ այսոքիկ արարածք եղեն . եւ սյլն :

Ի մասնէդ կարող էք զբոլորն ճանաչել . այս ինչն
յայդմ մասնէ :

Առ իրունք իրնաւ ամենն ալ ճանանալ .

Շու փարչատան հէփսինի տէ թանըյապիլիր սինիզ :

Քառասուն թիւդ ի հինդ ութից աւարտի :

Դ. Խըրորդ ստացական դերանուան տեղ :

Կամք ոչ բնաւ ախորժէ ղծերանալն . այս ինչն՝ կամք
մեր .

Մէր իամին ամենէ-ին ծերանալը ւեսիրեր .

Կէօյնիւմիւղ իխթիար օլմասընը իսթէմէզ :

Ի դարնանային եղանակս ամենայն զդայութեամբքն
զուարձանամք . այս ինչն՝ ամենայն զդայութեամբք
մերովք :

Ծածկեա զդլուխուր , զի խորշակ սաստիկ է ի լերինդ .

այս ինչն՝ ծածկեա զդլուխս քո , զի խորշակ սաստիկ
է ի լերինդ յայդմիկ .

Գւշ-իւր գոյնէ , ինչու որ առ լւաւ սաստիկ դաւ է .

Գափա պաշընը , զիրա շուտաղըն իւղէրինտէ շիտտէթլի
սըճադ վար տըր :

Ե. Կարաբառ լեզուի մէջ շատ յաճախեալ ոճ մըն
է՝ յարաբերական բառէ* մը ետքը պատահած բային կամ
անուան կամ դերանուան կամ մակրային վրայ ։ , ՚ , ՞
յօդերը դնել . այսպէս .

Աչաւասիկ զը դուն սիրէիր՝ հիւանդացեալ է .

Ահա ուս սիրած մարդու հիւ-ընդցել է .

Իշտէ սէնին սէվտիյին խասթէ օլմուշ :

Որ ոչն տեսանեն՝ տեսցեն, եւ որք տեսանեն՝ կուրասցին :

Այդ չէ տեսերդ զիս եւ հաւատացեր :

Ուր եսն երթամ դուք ոչ կարէք գալ :

Որ առաջին եւ զկնի երթային՝ աղաղակէին :

Մինչ մանուկն էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր :

Հատո ինձ զը պարտիսդ :

Զոր ասէն, կամ Զոր ասէն՝ այսպիսի ինչ է :

Վս օրինակներէս յայտնի կը տեսնես որ ։ , ՚ , ՞ յօ-
դերն առնող բառէն առաջ միշտ յարաբերական բառ
մը կայ :

Քիչ տեղ հարցական բառերէն ետեւ ալ կը դրուին :
Ընկեր, վասն որոյ եկիրդ : Գիտէք չինչ արարիդ ձեզ :
Ընդէր զրկիմս :

* Յարաբերական կ'ըսուին ան բառերն՝ որ հարկաւ նախընթաց
կամ հետեւորդ խօսք մը կ'ակնարկեն . ինչպէս են մին, ուր,
որ, որ ինչ եւայլն :

Գ Լ Ա Խ Ի Ժ Գ

ԲԱՑԵՐՈՒՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԶԱՆԱԶԱՆ
ԳԻՏԵԼԻՔ

Ա. ԵԵՐԳՈՐԾԱԿԱՆ բայերուն խնդիր սեռին հայցական կը դրուի, ինչպէս վերը խօսեցանք: Թէ որ ներգործական բայը կրաւորականի փոխուելու ըլլայ, ներգործական բային խնդիր սեռին՝ կրաւորականին անուն բայի կ'ըլլայ. Եւ ասոր հակառակ ներգործականին անուն բային՝ կրաւորական բային բացառական հոլով խնդիր սեռի կ'ըլլայ:

ՀԵՇԹԱՆՈՍՔ պաշտեցին զարեգակն եւ զլուսին: Արեգակն եւ լուսին պաշտեցան ի հեթանոսաց:

Առաջ առաջին պարբերութեան մէջ ՀԵՇԹԱՆՈՍՔ՝ անուն բայի է պաշտեցին ներգործական բային: Խսկ երկրորդ պարբերութեան մէջ ՀԵՇԹԱՆՈՍՔ՝ խնդիր սեռի եղած է պաշտեցան կրաւորական բային: Նոյնպէս զարեգակն եւ պաշտեցին խնդիր սեռի են պաշտեցին ներգործական բային. ու նոյն բառերն անուն բայի եղած են պաշտեցան կրաւորական բային:

Ճառագայթք արեգական լուսաւորեն զաշխարհս:

Աշխարհ լուսաւորի ի ճառագայթից արեգական:

Հրեայք խաչեցին զՅիսուս: Յիսուս խաչեցաւ ի Հրէից.

Կայէն սպան զեղբայր իւր: Աբէլ սպանաւ յեղբօրէն իւրմէ:

Արդ՝ իմանալու համար թէ արդեօք բացառականը խնդիր սեռի է, թէ խնդիր բնութեան, աս կանոնը պէտք է միտք առնուլ:

Ամէ որ կրաւորական բային բացառականը ներգործականին անուն բային կրնայ ըլլալ, ան ատեն կրաւորական բային խնդիր սեռին է, թէ չէ՝ խնդիր բնութեան է:

Ամէ որ նոր սորվողներն աս տարբերութիւնը չեն կրնար հասկընալ, իրենց բաւական է գիտնալ որ բացառականը կրաւորական բային խնդիրն է :

Բ. Երբեմն ներգործական բայ մը, երկաւ հայցական խնդիր կրնայ առնել .

Դու զ' առնես շնե՞լ:

Հարցից եւ ես շնե՞լ բան մէ :

Թագաւոր շնմ ասեն զՅիսուս :

Գ. Խօէպէտ ըսինք որ հայցական խնդիր միայն ներգործականները կ'առնեն, բայց չէղոք բայերն ալ երբ որ իրենց արմատն ածականով մը խնդիր կ'առնեն, գործիականի տեղ հայցական կ'ուզեն :

Զ. Թենայն հնարս հնաբեսցուուտ, զի ի սիրոյն Աստուծոյ մի վերջասցուք .

Ա. Են մէր յեւ+էն եկածն ընեն+, որ Առարուծոյ մէրեն պարէն-ին+. Ալահըն մուհապակէթինտէն այրըմամադ իշին, էլիմիզան կէլէնի էտէլիմ:

Ոչ ոք վկայէ զբարեկամէ իւրմէ շնէայո-նի-ն ստութեան :

Վ. Եսպէս կ'ըսուի նաեւ՝ շնարաւուտ նոիսանյն նոիսանյել. բայդում վաստակէս վաստակէլ. զնելու առ ի մոն մեղանլել. ախորան զանոր հողարդունէան . եւ այլն :

Դ. Շատ անգամ ալ անօրօշ հայցական կը դրուի: Երկնչել երկի-ու մեծ . այս ինչն՝ երկնչել երկիւղիւ մեծաւ :

Ելաց լուիւն մեծ . այս ինչն՝ ելաց լալով մեծաւ :

Զարմացաւ զարմացուն մեծ . այս ինչն՝ զարմացաւ մեծաւ զարմացմամբ :

Ե. Այսպէս չէղոք նաեւ կրաւորական բայերը գործիականի տեղ հայցական խնդիր կ'առնեն, երբ որ խընդիրին նշանակութիւնը չէղոք բային նշանակութեան մօտիկ ըլլայ :

Որք սրբութեամբ ճաշակեն զմարմին Տեառն ոչ մեռանին շյա-իունական ման :

Ունիւն+ որ Քրիստոնէ մարմինը որբուլնեամբ էլ ճաշակեն, յա-իունական մանուամբ զեն մեռնիր .

Քրիստոսուն թէնինի փագլողլա ալանլար, էպէտի
էօլիւմ իլէ էօլմէզլէր:

Ո՞չ ո՞նցն պարտ էր շրջրել Քրիստոսի, եւ այնպէս
մտանել ի փառս իւր. այս ինչն՝ նովին չարչարա-
նօք չարչարել:

Այսպէս կ'ըսուի, նոցւ ուսուն. ամառն լամօն. եւ
այլն:

Զ. «Այնպէս թէ ներգործական եւ թէ չէզոք բայե-
րուն քովը՝ յարաբերականը գործիականի տեղ հայցական
կը դրուի, երբ որ բային արմատը կը յարաբերէ:

Եսաւ պահէր ոխս Յակովը վասն օրհնութեանցն, ուր
օրհնեաց զնա Իսահակ հայր իւր. այս ինչն՝ որով
օրհնեաց զնա. եւ այլն:

Ակայ լիցին յարութեանն, ուր յարեաւ աստուածապէս.
այս ինչն՝ որով յարեաւ:

Ե. «Քանի մը չէզոք բայեր ներգործական բայի
ուժ ունենալով՝ քիչ տեղ հայցական խնդիր կ'առնեն:
Զոր ինչ հայէ ոք, ի նոյն փոխի մտօք, այս ինչն՝ զոր
ինչ տեսանէ ոք.

Ինչ որ մարդ էր արեանէ, միտին աւ այնպէս էր դոկտոր. Ինսան նէքի կէօրիւրսէ, ֆիքր իլէ տէ օնա թէպտիլ
օլուր:

Եղբայրն յանցեաւ զամանսն. այս ինչն՝ անգիտացաւ էամ
ոչ ծանեաւ զամանսն:

Ի բամբասանաց խնայեցէտ զլեզու. այս ինչն՝ արգելէք
էամ կարծեցէք զլեզու ի բամբասանաց:

Ը. «Այնպէս աս կրաւորական բայերը, վարդապէտիմ,
խրատիմ, հրամայիմ, պահանջիմ, հայցական խնդիր կ'առնուն*:

Ամենեցուն դատաստան եւ քննութիւն լինելոց է, եւ
մէք ընդ ամենայն մեղաց պահանջիմք զնամարն:

* Այնպէս էական բայով ձեւացած կրաւորակաները ներգոր-
ծական նշանակութիւն ունենալուն համար հայցական խնդիր
կ'առնեն:

Զգետնեաւ լինէր կոյսն մանուկ զտիեզերաստատ բանա-
ւորն. այս ինչն (Հռիփսիմէ) մանուկ կոյսն զգետնէր (զՏրդատ)
զտիեզերաստատ բանաւորն:

Թ. Արիանեմ, պարկանեմ բայերը խնդիր բնութեան՝ նախդրիւ սեռական խնդիր կ'առնեն, երբ որ տճկ. Սրբակ նշանակեն:


Հմուտ զեկավար մօտ ի նաւահանգիստն հասեալ, առաւել իմն զգուշանայ նաւին, զի մի պարէ հարիանիցի.

Աւարդեա նասավարը նասանանդադիմին ճօդիկ աւելի նասին վրայ դժուշունիւն էլնէ, որ +արէ նըստնէ.

Ուսմա րէյիզ լիմանա եագլաշընձա կէմիսի թաշա չարփրմասըն տէյի փէք զիատէ տըգգաթ էտէր:

Յետս յետս չոգան եւ պարիան դժետնի:

Այսպէս կ'ըսուի նաեւ՝ ծափ շժադիկ հարիանել, պահի, շահօնի հարիանել. եւ այլն:



Գ Լ Ա Խ Խ Ժ Գ

Ա Ն Ե Բ Ե Խ Ո Խ Թ Ի Ն Վ Ր Ա Ց

Ա. Աներետութիւն ներգոյականը՝ ատեն, ժամանակ կը նշանակէ, ինչպէս վերը (Երե 57) կը տեսնես * :

Ի ձնանելն Յիսուսի մողք յարեւելից եկին յերուսաղէմ.

Յիսուսուն ձնանելու առենը ճոճելն արեւելուն երանապէմ էին.

Յիսուսուն տօղտուղու վագլթ, միւնէջիմլէր կիւն տօղուտան գուտսի շէրիֆէ կէլտիլէր:

* Ընտիր ձեռագիրները, ինչպէս ընտիր տպագրութիւններու, մանաւանդ աստուածաշնչին մէջ կ'երեւայ, թէ կրաւորականին եւ թէ ձայնակրակերպ չէզոք բայերուն աներեւոյթը էւ կը բանեցընեն:

Քիչ տեղ աներեւոյթը էաւ կը վերջաւորի. ինչպէս, Հրամայեաց րղիսեալ թռչունս. այս ինչն՝ րղիսել:

Ի սիրել լուսոյ վաղվաղակի ըմբռնեսցին՝ որ ի խաւարի գնայցեն.

Ի բազմանալ մարդկան աճեցին չարիքն, զորս ջրհեղեղաւ դատեցաւ Աստուած *:

Եւ ի ուրմանելն :

Բ. Երբ որ աներեւութին վրայ առ է նախդիրը կը դրուի, համար կը նշանակէ . ինչպէս, առ ի գործել, գործելու համար : Տես առաջի մասին մէջ (Երես 57.) :

Գ. Երբեմն առ նախդիրը չեղբուիր :

Հովանի տերեւոյն պիտոյ է ի պահել զպտուղն . այս ինքն՝ առ ի պահել զպտուղն .

Պահուած պահելու համար ուերեւին շուրջ պէտք է .

Մէյվէյի սագլամա իշին եափրաղըն քէօլկէսի լազըմ տըր :

Ի լու եկեալ եմ ես . այս ինքն՝ եկեալ եմ ես առ ի լսել :

Դ. Շատ անգամ առ է նախդիրը բոլորովին չեղբուիր :

Զհուր շէջուանել ջրոյ պէտք են . այս ինքն՝ առ ի շիշուցանել զհուր ջրոյ պէտք են .

Արտիւ մարելու համար ջուր պէտք է .

Եթէշի սէօնտիւրմէ իշին սու լազըմ՝ տըր :

Գայ Յիսուս առ Յովաննէս միջուել ի նմանէ . այս ինքն՝ առ ի մկրտել ի նմանէ :

Ի մէջ լերանց աղբերք գնան, արբուանել զամենայն գազանս վայրի . այս ինքն՝ առ ի արբուցանել :

* Քիչ տեղ աներեւութին ներգոյականն իր սեռական կամ տրական անուն բայիին հետ կը համաձայնի, ինքն ալ սեռական դրուելով . այսպէս,

Ո՛վ ոք յանցանել տրտմալից գիշերոյ, եւ ծագելոյ առաւօտու, եւ արեգականն երեւելոյ ոչ ուրախանայ . այս ինքն՝ ով ոք ոչ ուրախանայ յանցանել տրտմալից գիշերոյ, եւ ի ծագել առաւօտու, եւ յերեւել արեգական :

Այսպէս կ'ըսուի նաև . Այսոցիկ այսպէս եղելոց . այս ինքն՝ ի լինել այսոցիկ այսպէս . Հզօր կռուոյ եղելոյ . այս ինքն՝ ի լինել հզօր կռուոյ . եւ այլն : Աս կանոնը յունարէնէն մտած է մեր լեզուին մէջ :

Ել իսահակ շբօսանել ի դաշտի ընդ երեկու . այս ինչն՝
ել իսահակ առ ի զբօսանել :

Ած Աստուած ջրհեղեղ աղախանել զամենայն երկիր .
այս ինչն՝ առ ապականել զամենայն երկիր :

Ե . Աներեւոյթ բայերն երբեմն ընտիր գրուած-
ներու մէջ սեռականի կամ տրականի տեղ , նախադրու-
թիւններուն ուղղական խնդիր կ'ըլլան :

Յեւրոպն տեղիք ինչ են ծովուց , որոց ջուրն ըստ
անել լուսնոյ աճէ , եւ ըստ պահասելն պակասէ .

Եւրոպն ծովի ուղիւղ իան , որոնց ջուրը լուսնոյ անե-
լուն պէս իւ շատնայ , ու պահասելուն պէս իւ պահսէ .

Էվրօփատա պազը սէմթլէրին տէնիզին սույու այ
պէօյիւտիւքձէ չօղալըր , վէ քիւչիւլտիւքձէ ա-
զալըր :

Ըստ յաստաջանալ ժամանակին բնութեամբ սովորին
բարիք :

Գրեաց վասն ոչ դատարկութեան եւ ծաղու ծառայա-
նալ . այս ինչն՝ վասն ոչ ծառայանալոյ ծաղու :

Վասն անբիծ եւ անդատապարտ կալ մեզ առաջի աչեղ
ատենին Քրիստոսի , զՏէր աղաչեսցուք . այս ինչն՝
վասն անբիծ եւ անդատապարտ կալոյ , եւ այլն :

Ի ծագել արեգական ընդդէմ մերոց զօրաց , սակաւ
ինչ զանդիտէին , վասն ոչ կարել հայել ընդդէմ
արեգականն ծագման :

Զ . Կոյնպէս ան անունները , որոնք աներեւութի
ուժ ունին՝ սեռականի տեղ ուղղական կը դրուին :

Քրիստոնեայքն առ աեր Քրիստոսի յոյժ խնդութեամբ
ընդունէին զամենայն չարչարանս . այս ինչն՝ վասն
սիրոյն Քրիստոսի * :

* Երբ որ աներեւութին գործիականն իր բային վրայ կրկնուե-
լու ըլլայ , բային նշանակութիւնը կը սաստկացընէ : Այս
օրհնելով օրհնեցէն զքեզ , եւ բազմացացանելով բազմացացէն
զզաւակ քո որպէս զաստեղս երկնից բազմութեամբ :

Աչ միայն գիտելով գրարին , այլ եւ այլոց ուսու-
ցանեն :

Է. Հատ անդամ՝ դիմաւոր բայի մը առջեւ աներեւոյթ բայ մը կը դրուի, չէ թէական շաղկապով դիմաւոր բայ դրուելու տեղ *:

Մի աղօթեր քոց կամաց հատարել. այս ինչն՝ մի աղօթեր զի կատարեսցին կամք քո.

Մէ աղօթեր որ ո՞ւ կամու ըլլայ.

Սէնին ըատէթինին իլէրի վարմասը իշին տուա էթմէ: Թողացուցանէ Աստուած դիւաց ժողովը զառաքինիս.

այս ինչն՝ զի փորձեսցեն զառաքինիս:

Բնութիւնս մեր սիրէ ծածկէլ զմերկութիւն:

Տեսանեմք երկուս արս միազգիս միմեանց մահու եւ արեան ծարաւել. այս ինչն՝ տեսանեմք զի ծարաւին մահու եւ արեան միմեանց:

Ը. Ականիմ, կարեմ, կամիմ, զանամ եւ այլն, բայերը հասարակօրէն իրենցմէ ետքը աներեւոյթ մը կ'ուզեն:

Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել.

Առէի ծառը ժէլ պառակ նիւրնոր առլ.

Էյի աղաճ քէօթիւ մէյվէ վէրէմէզ:

Ճշմարիտ հաւատացելոց սատանայ փորձութեամբք ոչ կարէ առնանել:

Յիսուս առեալ ջուր՝ արկ ի կոնք եւ ոչու լուսնու զոտս աշակերտացն:

Այրս այս սիստ շինել, եւ ոչ կարաց հատարել:

Զանային արքն ուրբայուանել զնաւն ի ցամաք:

Թ. Կոյնպէս դիմազուրկ բայերն ալ բաց ի տրականէն, որուն վրայ (Երես 170.) խօսեցանք, աներեւոյթ մ'ալ կ'ուզեն:

Քրիստոնէի ոչ է պարտ կուսակ այլ հեղ լինել.

Քրիստոնէայ եղողը պէտք չէ կուսակ, հաղու նեղ ըլլալ.

* Աս աներեւութին՝ արգելէլ ինդրոյ կ'ըսեն, իբր թէ դիմաւոր բային թող չիտար որ իր խնդիրն առնու: Բայց կրնանք ալ ըսել որ աներեւութին առջեւը դրուած խնդիրը բուն իր խնդիրն է: Եւ թէ որ աներեւութին խնդիրը բային տրուելու ըլլայ, շատ հեղ բոլորովին տարբեր խօսք կ'ելլէ: Ինչպէս թէ որ ըսեմ, Բնութիւնն սիրէ զմերկութիւն, եւ Բնութիւնն սիրէ ծածկել զմերկութիւն:

Պիր քրիստիանա նիզատան գաշըպ՝ միլայլում օլմադ
ֆարզ տըր :

Ոչ է բարեսու առնուլ զհաց մանկանց, եւ արկանել
շանց :

Յորժամ զԱստուծոյ ճառիցէ ոք, պարտի զմիտո
յառահել, եւ զխորհուրդս որբել, զշողս շարժմանց
պարզել :

Ժ. Յունարէն լեզուէն մտած է աներեւութին
անուն բային երբեմն հայցական դնել :

Որ սիրէ զընկեր իւր, կամի շնու լինել ողջ մարմնով
եւ առաքինի հոգւով. այս ինո՞ն՝ կամի զի նա լիցի.
եւ այլն :

Ու ո՞ւ իւ ընկերը իւ սիրէ, ի՞ո՞ւ զի ո՞ւ անինով մարմնով ողջ
ու հոգւով առաքինի ըւլոյ :

Այագտաշընը սէվէն՝ օնուն թէն իլէ սաղ, վէ ճան
ըւա ֆաղիլէթի օլմասընը արդիւլէր :

Կամիմ շյել իմաստունս լինել ի բարիս, եւ անմեղս
ի չարիս. այս ինո՞ն՝ կամիմ զի դուք իմաստուն իցէք.
եւ այլն :

Այնպէս ցուցէք ամենեցուն շյել ճշարտախօս լինել,
մինչ զի լոկ բանից ձերոց որպէս երդման հաւա-
տայցեն մարդիկ. այս ինո՞ն՝ այնպէս ցուցէք ամենե-
ցուն թէ դուք ճշմարտախօս էք. եւ այլն :

Զաւաքինութեան սստան քրտամբք եւ աշխատու-
թեամբ ասաց Պղատոն բուսանել. այս ինո՞ն՝ ասաց
Պղատոն, եթէ առաքինութեան ոստքն քրտամբք
բուսանին :

Ասեն յաւուրս քառասուն զարուն կենդանանալ. այս
ինո՞ն՝ ասեն թէ ի քառասուն աւուրս արուն կեն-
դանանայ :

Աս ոճը լեզուին աղէկ հմուտ եղողը կընայ բանե-
լնել :


ԺԱ. Երբ որ աներեւութին վրայ ընդ նախադրու-
թիւն դրուելու ըլլայ, ժամանակ կը ցուցընէ .

Ընդ երնալն նորա նեղէին զնա ժողովուրդքն :

Երնալն արենը ժողովուրդք զանիկա, իւ նեղէր :

Կիտէրքէն ճէմիաթ օնու սըդըշտըրըյօր ուտու :
Ընդ ելանելն Յիսուսի ի նաւէ , պատահեաց նմա այր մի :
Արջք օրհասականիք ընդ վախճանել շնչոյն հղորագոյնս
կռուին :

Երբեմն ալ կը նշանակէ՝ ողէս , շուր հը . կիպի , անիտէ .
Ընդ բուռանելն չորացաւ : Բուռանելուն ողէս զրցաւ .
Պիթուիլի կիպի գուրուտու :



Գ Լ Ա Խ Խ Ժ Ե

Ը Ն Դ Ա Խ Ն Ե Լ Ո Ւ Թ Ե Ա Ն Ց Վ Ր Ա Ց

Ա . Ո՞ւ վերջաւորեալ ընդունելութիւններն ածա-
կան են . եւ կը հոլովին ո՞վ , ո՞վ , ի՞ւ , այ , օ՛ւ կամ առ+ :
Այր բարիացով նիւթէ զկոփիւ :

Մի լինիր ընկեր առն բարիացով :

Բ . Եսոնք ներգործական բայի ուժ ունին , ու հա-
սարակօրէն հայցականի տեղ սեռական խնդիր կ'ուզեն :
Առաջի Աստուծոյ կեաս , որ քննող է սրբէց եւ իոր-
հըբեց :

Ասունո՞յ առջեւը ի՞ապէքէս , ո՞ր սրբէրն առ խորհուրդները
գննաց է :

Ալլահը կէօպիւ ալթընտա եաշայօրարն քի , եխորէյին
վէ տիւշիւնճէլէրին թէֆթիշճիսի տիր :

Եկը ի հարցմունս խոնարհամիտ , ի սլատասխանիսն
հանդարտ , եւ սիրող խաղաղութեան :

Զուգութիւն (միաբանութիւն) է մայր բարեաց , ան-
զուգութիւն (անմիաբանութիւն) ծնող վարեաց :
Փակողն աբժայութեան երկնից սուրբ առաքեալն ոլե-
տլոս , Քրիստոսի խաչակցեցաւ :

Գ. Շատ անգամ է ընդունելութեան յօքնակին՝
ու ընդունելութեան նշանակութիւնը կ'ունենայ:

Յուղա եղեւ առաջնորդ սանելեացն Յիսուսի. այս ինչն՝
ունողացն Յիսուսի.

Յուղա Յիսուսը բանողներուն առաջնորդ եղաւ:

Յուղա Յիսուսու թութանլարըն գրլավուզու օլտու:

Գինի ղեղծէ ղըմուշն եւ գայթակղեցուցանէ զտե-
սողսն. այս ինչն՝ ղեղծէ զարրողսն:

Աստուած չըոնադատէ, այլ չկամըլեացն ախորժէ զա-
ռաքինութիւն. այս ինչն՝ զկամեցողացն զառաքի-
նութիւն. եւ այլն:

Որ չկարիցէ առեղծուլ զառակսն, առեղծլեացն ինչս
տուժիցէ. այս ինչն՝ առեղծողացն.

Դ. Եաւ ընդունելութիւնը՝ երբ որ եւյ, եւմ, եւց,
եւս կը հոլովի, ածական է:

Որդի իրարեաւ իմաստուն լիցի.

Խրառած աղան իւլացի է՝ ըւլոյ.

Նասիհաթլանմըշ էվլատ իլիմտար օլուր:

Արեգակն ճառագայթիւք իւրովք լուսաւորէ զդո-
խառարեաւ:

Ե. Եաւ ընդունելութիւնն ան ատենը բայի պէս կը
բանի, երբ որ աներեւոյթ բային գործիականին ուժը
կ'ունենայ:

Մեղուք նախ որդն ծնանին, եւ որդն աճեցեաւ եւ
ներբերեաւ՝ թուչուն կերպարանի.

Մեղուները առաջ էը ծնանին, եաւ արտը արտը մեծնալուն
ու ներբերելուն նուշն է՝ ըւլոյ.

Արըլար էվլէլա պէօճէք տօղուրուրլար, վէ սօնրա
պէօճէք պէօյիւիւպ վէ դանատ պիթիրիպ՝ գուշ
քիսվէթինի կիյէր:

Նախամարգարէն Մովսէս ի Հոգւոյն սրբոյ կարդա-
պէտեաւ՝ ուսաւ ղջանգամանս լինելութեան արա-
րածոց:

Մարդկան յԱստուծոյ, զտարերս աստուածս
ասացին:

Որդին Յակովը Յովեկի նէնդէալ յեղբարցն վաճառի
յԵղիպտոս:

Նախանձոտն տկարանայ առ Ճշմարտութեանն ընտրու-
թիւն, ի նախանձուն խաւարէ կուրացէալ:
Տես նաեւ (Երես 169):

Զ. Լոյ ընդունելութիւնն էական բայի հետ մէկ
տեղ կը բանի, ու կը նշանակէ պէտք: (Տես Երես 58.):
Երբ եւ իցէ մեռանելոց եմք.

Երբ որ է նէ պէտք մեռնին:

Նէզաման քի օլսա էօլէճէյիղ:

Ամենեքին կալոց եմք առաջի ատենին Քրիստոսի:

Ամենայն դատարկ բանի համարս դալոց է+:

Է. Երբեմն ըստ ընդունելութեան տեղ ուրիշ բայ
մը կը դրուի, որ նոյն ընդունելութեան ուժն ունի:

Համարս ունիմք պատ Աստուծոյ, այս ինչն՝ համարս
տալոց եմք:

Ընդ ամենայն դատարկ բանից համարս դաւ հասանէ:
Հանդերյէալ ես մեռանել. այս ինչն՝ մեռանելոց ես:

Կայ հայ մարդկան միանդամ մեռանել. այս ինչն՝ մար-
դիկ միանդամ մեռանելոց են:

Ը. Լոյ ընդունելութեան ապառնին մէկ բանի
յարմարութիւն կամ արժանաւորութիւն ունենալ մը
կը նշանակէ:

Զուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է.

Պատ ջուրը ծարուած մարդու ախորժելի է.

Սուրդ սու սուսամը քիմնէյէ արզիւլիւ տիւր:

Ամբարտաւանութիւն ապէլի է Աստուծոյ եւ մարդկան:

Ամենայն որ մարմին է՝ շնալի է, եւ որ անմարմին է՝
իմանալի է:

Մանուկ կաթնակեր, որ յայլ ինչ կերակուր մտա-
բերիցէ՝ ոչ պատժելի է, այլ արժանադրելի:

Թ. Օձէ որ ընդունելութիւնները, մանաւանդ էալ
վերջաւորեալները խնդիր ունենալու ըլլան ու խնդիրն
իրենցմէ առաջ դրուելու ըլլայ, ընդունելութեան նախ-

Դիրն իր ինդրին վրայ կը դրուի : Ինչպէս յատկացուցչն
ու յատկացեալին վրայ (Երեւ 172 եւ 173.) ըսինք :

Գովութեան արժանաւոր այն բժիշկն է , որ չ' է դրուն
մահու հասեալ հիւանդն դարձուցանէ . այս ինչն՝ որ
դարձուցանէ զհիւանդն հասեալ ի դրունս մահու :
Գովութեան արժանի ան բժիշկն է , որ մահուան դրունը հա-
սած հիւանդը իւ դարձընէ .

Հիւրմէթէ լայրդ օ հէքիմ տիր , քի էօլիւմ սաա-
թընա եէթիշմիշ խասթայը սաղալտըր :

Հուրն յորժամ չ' նա անկեալ նիւն ծախեսցէ , ինքն
շիջեալ աներեւոյթ լինի . այս ինչն՝ յորժամ ծա-
խեսցէ զնիւթն անկեալ ի նա :

Զ'առ է դուրսն ընկեցելովն զանց առնեին :

Զառաւինունեամբ ըսրդարեալսն պարտ է պատույ ար-
ժանիս վարկանել եւ մեծարանաց . այս ինչն՝ զզար-
դարեալսն առաքինութեամբ :

Քրիստոս իւրով անպարտական մահուամբն կենդա-
նացոյց շմանու դադարակարտեալս . այս ինչն՝ զդատա-
պարտեալքս մահու :

Գ Լ Ո Ւ Խ Փ Զ

Բ Ա Յ Ե Ն Ա Ւ Ն Ն Ե Ր Ա Ւ Վ Ա Յ

Ըստ գոյական եւ ածական անուններ կան, որոնք կամ ներդործական, կամ կրաւորական եւ կամ չեղոք աներեւութի ու ընդունելութիւններու ուժ ունենալնուն համար՝ բայցանուն կ'ըսուին. այս ինքն՝ բայի ուժ ունեցող անուն :

Ա. Ասոնցմէ սովոր եւ սովոր վերջաւորեալ գոյականները հասարակօրէն աներեւութի ուժ ունին, եւ խնդիր սեռի սեռական հոլով կ'օւզեն :

Ախտացեալքն դժկամակ լինին յարքութիւն դեղոց օգտակարութեան. այս ինչն՝ դժկամակ լինին ըմպել զօտակար դեղս :

Հիւանդները չեն սովոր օդապահը դեղքը խուլ. Խասթալար մէնֆաաթլը իլաճլարը ալմագ իսթէմէզլէր :

Աստուած արար զդինի յասազնութիւն հիւանդաց, ի մինիարքութիւն ծերոց, եւ ի սովոր սովորաց. այս ինչն՝ առ ի առողջացուցանել զհիւանդս, ի մխիթարել զծերս եւ ի սփոփիել զսդաւորս :

Հարց յանձն է խնամածութիւն աղոց մանկանց. այս ինչն՝ խնամել զտղայ մանկունս :

Յարքարզութեան աշխարհի ջուր ծածկեալ ունէր զամենայն երեսս երկրի. այս ինչն՝ յարարչագործելն աշխարհի :

Ակիզըն սուսան ժրոց աշխատութեամբ լինի. այս ինչն՝ սկիզբն ուսանելոյ զգիրս աշխատութեամբ լինի :

Յընթերցմանէ ժրոց ոչ երբեք ձանձրանամ. այս ինչն՝ յընթեռնլոյ զգիրս ոչ երբեք ձանձրանամ:

Բ. Կան ուրիշ անուններ ալ՝ որ աներեւութի ուժ ունենալով՝ սեռական խնդիր սեռի կ'առնեն* :

* Քիչ տեղ սեռականի տեղ հայցական ալ խնդիր սեռի կ'առնեն :

Օքհանութիւն խստհակայ զՅակովը եւ Յակովը զՅակովայ զՅակովա :

Արար Աստուած զերկիր պտղաբեր ի անունդս ծառայէց
էրաց . այս ինչն՝ առ ի մնուցանել զծառայս իւր :
Աստուած երիբը պարզէն ըրա , եւ ծառաները անու-
ցանելու համար .

Հագ թաալէ քէնտի դուլարընը պէսլէմէք իշին թօփ-
րաղը մէյվէտար էթտի :

Յետ վախճանին Յովսեփայ նեղէին Եգիոլտացիքն
զիսրայէլ է շինուած ժաղաւաց եւ է գործս դաշտաց .
այս ինչն՝ նեղէին առ ի շինել զքաղաքս եւ ի
գործել զգաշս :

Գ . Կրաւորական աներեւութի ուժ ունեցող անուն-
ները բացառական հօլով խնդիր կ'առնեն :

Մահն ոչ այլ ինչ է , քան անջարումն հոգւոյ է մար-
մայ :

Եօլիւմ պաշգա շէյ տէյիլ , ֆագաթ ճանըն թէնտէն
այրլմասը տըր :

Սուրբքն աղօթիւք զմահ խնդրէին , եւ զըսծումն է
մարմայ . այս ինչն՝ զլուծանելն ի մարմնոյ * :

Այսպէս կ'ըսուի նաեւ՝ Ծննդունդ Տեառն Թրոյ է սրբոյ
կուսէն . այս ինչն՝ ծնանելն Տեառն մերոյ ի օրբոյ կու-
սէն : Եղէքն շարժուն է հողմոյ . այս ինչն՝ Եղէգն շար-
ժեալ ի հողմոյ :

ոչ ի նոսա , այլ ի թոռունս նորա կատարեցաւ . այս ինչն՝
օրհնելն իսահակայ զՅակովը եւ Յակովքայ , եւ այլն :
Պահեցէք զմիտս ձեր ի դադմոնէ Նընիւրն . այս ինչն՝
ի դատելոյ զընկերն :

* Երբեմն կրաւորական աներեւութի մանաւանդ Իտւ ընդու-
նելութեան ուժ ունեցողները բացառականի տեղ սեռական
կ'առնեն :

Եմ եմ եւ ես մարդ մահկանացու Ճնունդ Նախասդիուչին .
այս ինչն՝ ծնեալ ի նախաստեղծէն :

Այսպէս կ'ըսուի Հորդողետունիւն մարդիոն պատուիրէտւ .
այս ինչն՝ պատուիրեալ ի մարդկանէ : Մարդիոն հառապուրիւն
իրաէ . այս ինչն՝ կտակ հաստատեալ ի մարդկանէ : Կոխոն
սուից . այս ինչն՝ կոխեալ յոտից : Անիւու սույ . այս ինչն՝
անկեալ ի սրոյ :

Դ. Այնպէս ան անունները, որոնք որ ո՞ւ ընդունելութեան ուժ ունին՝ հայցականի տեղ սեռական կ'առնեն * :

Չեռքն են բործունեայ բործոյ. այս ինչն՝ գործող գործոց :

Աստուած կանիսադեռ է հանդելյելոց. այս ինչն՝ կանխաւ դիտող է հանդերձելոց :

Միտք են մարմնոյ եւ հոդոյ կաւավար. այս ինչն՝ կառավարող մարմնոյ. եւ այլն :

Խորշակ Ռաւամեցուցիլ է բուսոց և անկոց. այս ինչն՝ թառամեցուցանոլ է բուսոց :

Ե. Խոկ խնդիր բնութեան՝ ան բային պէս կ'առնեն՝ որ բային որ ուժն ունին :

Անյայտ է ժամանակ ելից մերոց ի մարմնոյ ասորի. այս ինչն՝ ելանելոյ մերոյ ի մարմնոյ աստի :

Մի մուռ է ամենեցուն յաշեարհ, եւ մի ել հասարակաց. այս ինչն՝ ամենեցուն մտանելն յաշխարհս միօրինակ է :

ԶՀՈՒԴ-ՈՅՆ հայրայունիւն մի թողցի. այս ինչն՝ մի թողցի հայհոյել զշոգւոյն :

Բարկութիւնն է եռանդն զսրտիւ արեան. այս ինչն՝ եռալ արեան զսրտիւ :

Աստուած արար զարեգակն լուսապուռունընջւան, զլուսին եւ զաստելս՝ լուսապուռ գլշերոյ :

Եղաք մտաւորք եւ բանաւորք, եւ աղասատուուն յանբանից. այս ինչն՝ առողք զսպասաւորութիւն յանբանից :

Հեթանոսք արարածոց պաշտօնադար+ եղեն :

Ը ատ անդամ ածական անուններն ալ առանց բայի ուժ ունենալու խնդիր կ'առնեն :

* Երբեմն թէ ո՞ւ վերջաւորեալ ընդունելութիւնները, եւ թէ ո՞ւ ընդունելութեան ուժ ունեցող անունները հայցական խնդիր կ'առնեն :

Ոչ սիրողաց զեղբարս պատիժս խոստանայ :

Գտիչք չարեաց, զծնողս անարդուք :

Հուր ծախիչ զիսոիւ :

Զ. Որոնք որ նման, յարմար, մերժութ կը նշանակեն,
տրական խնդիր կ'առնեն, ինչպէս հարցումն ալ կը պա-
հանջէ:

Որպէս ոչ են նման երեսք երեսաց, նոյնպէս եւ ոչ
սիրտք մարդկան սրտից նման էն:

Բնութիւնս մեր միմանց կարօտ ստեղծաւ յարարչէն:
Լեզուն արժանի է մեծի զբուշունեան:

Է. Որոնք որ չունենաւ կամ չուրի ըլլաւ կը նշանա-
կեն, բացառական խնդիր կ'առնեն, ինչպէս հարցումն ալ
կը պահանջէ:

Չիք ինչ տեղի, որ նախուր իցէ յԱստուծոյ:

Արարիչն ամենեցուն աներեւոյն է ի մարմնաւոր ալսոյ:

Անդաստան ճագուր է իշոյ:

Անարդ զեռունն եւս ոչ մնայ անդործ է ինամոցն Աս-
տուծոյ:

Գայլ աղստամբ է ի մենոյ եւ ի հնազանդութենէ ձեռաց
մարդկան:

Անխուսն է ջրոյ գինին անապակ կոչի:

Ը. Են ածականները, որոնք որ ան մասնկամբ կը
բաղադրին՝ կրնան շատ հեղ բացառականի տեղ սեռա-
կան կամ տրական խնդիր առնել:

Աստուած անչաս է մտաց իւմ ի մտաց:

Աստուած անտես է աչաց իւմ յաչաց:

Անձաշակ հոգեւորական իմաստից:

Անձաշակ յերկնաւոր բարեաց:

Գ Լ Ա Խ Խ Փ Ե

ՄԱԿԻԹԱՅՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Ա. Հաս տեղ պարզ ածական անունները բայի
վրայ իյնալնուն համար մակրայ կ'ըլլան.

Մի ունայն ծախեսցուք զսակաւ աւուրս կենաց մերոց:
ուսունայնը՝ որ պարզ ածական անուն է, մակ-
րայ եղեր է:

Հուկաս լուսառադոյն պատմէ զհանգամանս վերանա-
լցն Քրիստոսի:

Որ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի:

Մեծաւ փութով անդանդառ տայ զանձն ի գործ եւ ի
վաստակ (մրջիւնն):

Մեծայայն կարդացէք:

Այսպէս կ'ըսուի նաեւ՝ անողոք դադեւ, առառ պար-
ծեւ, անիրառ զրդարդեւ. եւ այլն: Տես առաջին մասին
մէջ (Երես 125.):

Բ. Երբեմն աս ածականներուն վրայ, երբ որ մակ-
րայի տեղ կը բանին, « գիրը կամ ի՞ն մասնիկը կը
դրուի:

Բազմապատիկս աշխատէին:

Լեզու փոքր ինչ անդամ է, այլ մեծամեծ բարբառի:
Չարագործքն իսղճիւ մտաց հարեալք սաստկագոյն-
տանջին:

Զուրն առաւեւ ի՞ն գիրացուցանէ զերկիր, եւ զսնունդս
նորա դարմանէ:

Երիտասարդք առաւեւ ի՞ն ունին զանհնազանդութիւն
վասն եռանդնոտ արեանն եւ անհաստատ բարուցն:

Այսպէս կ'ըսուի նաեւ՝ անշահն լաւ, անօդուագս ծա-
խեւ, եւ այլն:

Գ. Երբեմն ալ նախդրիւ տրական կը դրուի.
այսպէս,

Յանիկաս ուտեւ. Յանյայտս ի ներքս մտանեւ:

Յանհոդս կալ. Յանարժանս ծախեւ. եւ այլն:

Դ. Ասոր հակառակ երբեմն մակրայները գոյական

անուններու վրայ իյնալնուն համար , ածականի տեղ
կը բանին :

Սիրտն է շտեմարան ամենայն բորբոք խորհրդոց . այս
ինչն՝ բարի խորհրդոց :

Որդեմար սիրով զկամս հօրն կատարել . այս ինչն՝ որ-
դիական սիրով :

Շինէ երկուս տունս մշտառէն ծախիւք . այս ինչն՝ մեծ
ծախիւք :

Աստուած զանձառելի ժածկառէն խորհուրդ տնօրէնու-
թեան մարդարէիւք տպաւորեալ եցոյց . այս ինչն՝
զծածուկ խորհուրդ տնօրէնութեան մարդարէիւք
եցոյց :

Ե . Ամակբայները կրնան նաեւ բայանուններու վրայ
դրոիլ :

Աէմ հատեալ ի լեռնէ ստատիկ ոլորմամբ վայրաբերի :
Յանկարծոնի շարժմունք բազում անդամ ի միում ժա-
մու զաշխարհս սասանեցին :

Զ . Խոկ երբ որ առանկ մակբայ ունեցող բայանունը
կամ ընդունելութիւնը նախդիր ունենայ , նախդիրը մակ-
բային վրայ կը դրուի :

Աղորմութեան փոխարէն պարգևել Աստուած զի
սկզբանէ պատրաստեալ արտայութեան . այս ինչն՝ պար-
գևել զարբայութիւնն պատրաստեալ ի սկզբանէ :

Ծունկք առաքելոյն Յակովբայ խստացան իրեւ զուղ-
տու ի ստէպ ծունք իրինելոյն :

Է . Երբ որ նախագրութիւնները խնդիր ունենալու
ըլլան , բային վրայ կ'իյնան ու մակբայի պէս կը բանին :

Արի , անց ի մէջ .

Եւ , մէջուղը եխուր .

Գալք , օրթայա կէլ :

Մտեալ ի նաւ անց յայնիւյս :

Արձակեա զժողովուրդսդ , զի երթեալ շարժ յագա-
րակս , գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն :

Ը . Երբեմն նոյն անունը կրկնուելով կամ շատ ա-
նուններ քովէ քով գալով՝ մակբայի տեղ կը բանին :

Սովու էս տան զետես սաստկանայր :

Աստուած ընդ Մովսեսի բերան է բարան խօսեր :

Բան առ բան պատասխանի առնել :

Արբեալքն ոչ կարեն ուղիղ ոտիւք ընթանալ, այլ
էայն է էայն, եւ վաղվաղակի անկեալ կործանին :

Աստուածպաշտութիւն բարյր է էլո-ի երեւեալ լիներ
յաշխարհին Հայոց :

Մեծ ամուրդ այդ հիմ է վեր տապալեցաւ :

Առ Մակեդոնացւոց թագաւորն ագուաք ողջոյն տային
շայս օրինակ, խնդա թագաւոր Պաղոմէոս :

Եւ էր պատճեն հրովարտակին օրինակ շայս :

Թ. Կոյնպէս քանի մը անուններ զանազան հոլով
դրուելով մակրայի ուժ կ'ունենան :

Աիծել շնանաղարկայն :

Չարութիւնն թէպէտ առ ժամայն Հեշտացուցանէ,
սակայն յետոյ մեծապէս տրտմեցուցանէ :

Լեառն Սինա ծխէր առ նասարակ :

Առ օրին կամ նոյն օրին հատուցանել զվարձ :

Համարեցան թէ առ ազգ ինչ իցէ :

Կալաւ Սաւուղ զթագաւորն Ամաղեկայ զԱգագ իւն-
դանառյն :

Հանէ զգիշերն է էլո-ի յաղօթս :

ԾԱՆՈՒՑՈՒՄ:

Որչափ կարելի էր՝ ջանացինք համաձայնութեան
գիտելիքները գիւրին կարգով, բացայայտ օրինակներով
քիչ կանոնի մէջ համառօտել. միանգամայն հարկաւոր
գիտելիք մը դուրս չձգել: Միայն քանի մը զարտուղու-
թիւններ դուրս թող տուինք, որոնք մեր նախնիք բա-
նեցուցած են՝ իրենք լեզուի հեղինակ ըլլալնուն համար,
կամ մեր լեզուն շատ բանուկ ըլլալուն համար: Անոնց-
մէ մէկ քանին հոս դնենք, որ մնացածները կարդացողը
մակաբերէ:

Երիս խորհուրդս սոսկալիս տեսանի: Հոս անուն բայ-
ին թուով չէ համաձայներ բային հետ, ու յոդ-
նակի ուղղականին + գիրը սի փոխուեր է:

Ո՞յք ուրած + ի մարդկանէ զերիս տիւս եւ զերիս գիշերս անընդհատ ի քուն լինիցի : Հոս դիմաւոր բային անուն բային սեռական դրուեր է :

Երբեմն այս , այդ , այն . ցուցական դերանունները՝ թէ իրենց գոյականէն առաջ ու թէ ետքը դրուին , ամենեւին չեն հոլովիր :

Այդ է-լոյդ : Փոխանակ ըսելու . այդր է-լոյդ :


Տանս այս , հղօքիս այս : Փոխանակ ըսելու . դանս այսորին , հղօքիս այսորին :

Կամ մէկ հոլովը մէկալ հոլովի տեղ կը դրուի :

Այս երախտեօտ , զայսու առուրբ + , այսմ սահմանաւ : Փոխանակ ըսելու . այսուիւտ երախտեօտ , զայսուիւտ առուրբ + , այսու սահմանաւ :

Եյսպէս կ'ըսուի նաեւ՝ որում անուն էր Յայրոս , այս ինքն՝ որոյ անուն էր Յայրոս :

Որչափ աւելի փոյթ ունենայ սորվողը կարդացածը աղէկ հասկընալու , այնչափ աւելի դիւրաւ կրնայ զտնել այսպիսի զարտուղութիւնները :



ԳՅԱԿԱԿԱ ԺՐ

ԼՈՒԾՄԱՆ ՈՒ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԵՇԿԵՐՏՆԵՐԸ քերականութիւնը դաս առնելու սկսած օրէն պիտի սկսին ամէն օր մէյ մէկ քիչ պարզ գրքէ մըն ալ կարդալ , միանդամայն չգիտցած բառերնին սովորիլ : Ետքը ան սովորածներնուն վրայ պիտի սկսին զատել նախ անուններուն հոլովերը , երկրորդ ածականն ու գոյականը , ու ետքը դերանունները , բայերուն սեռը ու խոնարհմունքը , եւ այլն . այսպէս ,

Երբեւ էջ Յիսուս ի լեռնէ անտի , գնացին զկնի նորա ժողովուրդը բազումք :

Իբրեւ մակրայ. Էջ, իջանէ ներգործակերպ չեղոք բային կատարեալին եղակի երրորդ դեմը. Յիսուս ուղղական յատուկ անուն. ի լւոնէ բացառական, կ'ելլէ լւոն գոյական անունէն, անոնի մակրայ: Գնացին, գնամ ներգործակերպ չեղոք բային կատարեալին յոդնակի երրորդ դեմը. շնչի նախադրութիւն, նորա սեռական խնդիր նախադրութեան. ժողովուրդութիւն յոդնակի ուղղական, բազում իր ածականը, որ մէկտեղ հոլովեր է:

Երբ որ երկրորդ մասը կը սկսին, ան ատեն պիտի ճանչնան թէ որն է անուն բային, խնդիրը, յատկացուցիչը, եւ այլն: Անոր համար ըսինք որ սովորածներնուն վրայ ընեն լուծումը, ինչու որ մինչեւ խօսքը չհասկըցուի՝ չիլուծուիր, ու խօսքը չհասկընալն է պատճառը, որ նորերը չեն կրնար լուծում ընել: Ուստի լուծելու խօսքը յառաջ պէտք է թարգմանել տալ տղուն, ինչ լեզու որ աղեկ կը հասկընայ, ու ետքը լուծել տալ այսպէս,

Օբինակի:

Իբրեւ Էջ Յիսուս ի լեռնէ անտի, գնացին զինի նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա մատուցեալ բորոտ մի երկիր պատանէր նմա եւ ասէր, Տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել:

Ծէսսու երբ որ լւոնէն իջաւ, անոր եպեւէն շատ ժողովուրդներ դացին: Եւ ահա բորդոր մը ուղիւր դաւը անոր երիւրդունիւն է՛լներ ու է՛լներ, ու Տէր, նէ որ է՛նունէն, նընաս շնչ սրբել:

Ա, էղաման Յիսուս տաղտան էնտի, օնուն արտընտան չօդ Ճէօմահաթլար կիթախիլէր: Վէ իշխնէ պիր ույուղու օնա եագլաշըս սէճտէ գրլար ըտը վէ տէրիտի, էֆէնտիմ, էյէր իսթէրսէն պէնի թէմիզ էտէպիլիրսին:

Լուծումն:

Եջ ներգործակերպ չեղոք բայ է. Յիսուս անուն բայի. ի լւոնէ անոնի, այս ինքն՝ ի լւոնէն բացառական խնդիր էջ բային. իբրեւ մակրայ: Գնացին չեղոք բայ.

ժողովրդի բաղաւտ անուն բայի . զի՞ն նոր նախադրութեամբ խնդիր գնացին բային : Մասունցեալ անցեալ ընդունելութիւն , որ գործիականի ուժ ունի . Երկիր պահանջը ներգործական բայ . բորսոր մի անուն բայի . Նմատրական խնդիր Երկիր պահանջը բային . Եւ շաղկապ . անմակբայ : Ասէր ներգործական բայ . Իր անուն բային զօրութեամբ կ'իմացուի՝ որ է նա , այս ինքն՝ բորսորն . Եւ շաղկապ : Տէր կոչական . համես հասարակ բայ , զօրութեամբ ունի անուն բային , որ է դու . Ենէ շաղկապ . իտու Եւ չէղոք բայ , զօրութեամբ ունի անուն բային դու . Արբել իր աներեւոյթը . զի խնդիր սեռի՝ Արբել աներեւութիւն :

Երբ որ վարպետը կը տեսնէ որ աշկերտը բաւական կը հասկընայ , ան ատեն հարկ չէ ամէն բան նախ թարգմանել տալ , հապա միայն ան կտորները՝ որոնք աւելի դժուար են :

Երանպէս երբ որ դիւրին խօսքերը կընայ անախալ լուծանել , ան ատեն լուծումն ուրիշ կարճ կերպով պէտք է լնել :

Ես երկրորդ լուծման կարդն աս է , նախ՝ իւրաքանչիւր բառ իր կարգաւը դնել . Երկրորդ՝ մութ խօսքերը պարզել :

Կարդին մեջ ամէնէն առաջ կը դրուի յարաբերական գերանունը կամ շաղկապը , Ետքը մակրայը , Ետքը անուն բային , Ետքը խնդիր սեռին , Ետքը մէկալ խնդիրները . այսպէս ,

Հիշեաց Աստուած զնոյ . . . Եւ ած Աստուած հողմ ի վերայ Երկրի . Եւ խցան ալբերք անդնդոց , Եւ արգելաւ անձրեւ յերկնից . . . : Եւ նատաւ տապանն ի լերինս Արարատայ : Եւ յետ քառասուն աւուր երաց նոյ զպատռէան տապանին , Եւ արձակեաց զագուաւն :

Լուծումն :

Աստուած յիշեաց զնոյ , Եւ Աստուած ած հողմ ի վերայ Երկրի . Եւ աղբերք անդնդոց խցան , Եւ անձրեւ արգելաւ յերկնից : Եւ տապանն նստաւ ի լերինս

Արարատայ : Եւ նոյ եբաց զպատուհան տապանին, եւ արձակեաց զագուաւն :

Հատկացուցիչը յատկացեալէն, բացայայտիչը բացայայտեալէն, ու բացասական մասնիկն իր բայէն, մասնական անուան բացառական խնդիրը, ածական անուան խնդիրը ածականէն չեն զատուիր . ինչպէս ,

ՕՐԻՆԱԿ :

Ետես Փարաւոն երազ . թուէր թէ կայցէ յեզր գետոյ . եւ ահա որպէս թէ ի գետոյ անտի ելանէին եւթն երինչք գեղեցիկք տեսանելով եւ ընտիրք մարմնով : Եւ այլ եւս եւթն երինչք ելանէին ի գետոյ անտի , զազիրք տեսանելով եւ վտիտք մարմնով :

Լուծում :

Փարաւոն ետես երազ . թուէր եթէ կայցէ յեզր գետոյ , եւ ահա որպէս թէ եւթն երինչք գեղեցիկք տեսանելով եւ ընտիրք մարմնով ելանէին ի գետոյն : Եւ այլ եւս եւթն երինչք զազիրք տեսանելով եւ վտիտք մարմնով ելանէին ի գետոյն :

Այլ օրինակ :

Խջին եղբարքն Յովսեփու տասնեքին գնել ցորեան յեգիպտոս , եւ զբենիամին զեղբայրն Յովսեփու ոչ արձակեաց Եակոր ընդ եղբարսն . քանզի ասէր թէ գուցէ պատահիցէ նմա Հիւանդութիւն : . . . Ծանեաւ Յովսեփ զեղբարսն իւր , եւ նոքա ոչ ծանեան զնա . յիշեաց Յովսեփի զերազն իւր , եւ ասէ ցնոսա . Լրտեսք էք գուք , եւ դիտել զել եւ զմուտ աշխարհիս եկեալ էք :

Լուծում :

Տասնեքին եղբարքն Յովսեփու իջին յեգիպտոս ու է գնել ցորեան , եւ Յակոր ոչ արձակեաց զբենիամին զեղբայրն Յովսեփու ընդ եղբարսն . քանզի ասէր թէ գուցէ Հիւանդութիւն պատահիցէ նմա : Յովսեփ ծանեաւ զեղբարսն իւր , եւ նոքա ոչ ծանեան զնա .

Յովսէփ յիշեաց զերազն իւր, եւ ասէ ցնոսա. Դուք էք լրտեսք, եւ դու+ եկեալ էք առ է դիտել զել եւ զմուտ աշխարհիս :

ՕՐԻՆԱԿ :

Ասէ ոմն ի ժողովրդենէն ցնա, վարդապետ, ասա ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգութիւնն :

ԼԱՇԱՏԻ :

Ոմն ի ժողովրդենէն ասէ ցնա, ու վարդապետ, դու ասա ցեղբայր իմ բաժանել զժառանգութիւնն ընդ իս :

Խսկ պարզելու մժութիւններն ասոնք են, այս ինքն՝ թէ որ յարաբերականը յոդնակիի տեղ եղակի է նէ, յոդնակի ընել. երբ որ հարկաւոր եղած տեղ աներեւութիւն վրայ առ է նախոդիրը կը պակսի՝ դնել. նոյնպէս անուն բային ալ թէ որ ներգործութեամբ չէ դրուած, ներգործութեամբ դնել, եւ այլն :

ՕՐԻՆԱԿ :

Ոչուրուք լուցեալ ճրագ՝ դնէ ի թաղստեան. եւ ոչ ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի. զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն :

ԼԱՇԱՏԻ :

Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ ի թաղստեան, եւ ոչ ու դնէ ընդ գրուանաւ, այլ դնէ ի վերայ աշտանակի. զի որ+ մտանեն՝ տեսանիցեն լոյս :

ՏԵՍՎԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐՆ ԱԼ :

ԸՆԹԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Կախնեաց շարագրութեան միտ դնելու ըլլանք, կը տեսնենք որ մեջերնին զանազանութիւն մը կայ: Աս զանազանութեան ուսկից առաջ գալը թող տալով, (որովհետեւ անիկա լեզուին պատմութեան կը վերաբերի,) հոս մինակ ինչ ու քանի տեսակ ըլլալուն վրայ համառօտ մը կը խօսինք :

Կ արագրութիւնն երեք տեսակ կրնանք բաժնել, այս ինքն՝ Պարզ, Մէջակ եւ Ճոխ կամ Բարձր:

Ա. Պարզ կ'ըսուի ան շարագրութիւնը՝ որուն շարքը ընական է ու դիւրաւ կը հասկըցուի: Այսպէս

են Աստուածաշնչին շատ գրքերը, այս ինքն՝ Մովսեսին հինգ գրքերը, Յեսու, Դատաւորք, Թագաւորք, Մնացորդք, Մարգարէութեանց ոմանք, չորս Աւետարանները: Իսկ վերջին հեղինակներու գործքերէն ասոնց կարգը կրնան սեպուիլ Հարանց վարուց խրատները, Շնորհալին, Յայսմաւուրքը, եւ ասոնց նման գրուածներ:

Բ. Միջակ կ'ըսուի ան շարագրութիւնը՝ որուն բառերն ու ոճերն աւելի վայելուչ ու կարգը հասարակ բնական կարգէն տարբեր է. ինչպէս են Աստուածաշնչէն Յուղիթ, Իմաստութիւն, Գործք առաքելոց, Պօղոսի, Պետրոսի, Յուղայի, եւ այլն թղթերը. Եղնիկ, Ասկերերանին Մատթէի, Պօղոսի թղթոց եւ Եսայեայ մեկնութիւններն եւ ուրիշ շատ ճառերը, Ս. Քարսղի վեցօրեայ արարչութեան գիրքը, Եւսեբիոսին ժամանակագրութիւնը, Սեբերիանոսի ճառերը, Ս. Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ Սուրբ Գրոց մեկնութիւնը: Աս կարգին տակը կ'երթան նաեւ Ս. Եփրեմին՝ Սուրբ Գրոց մեկնութիւնը, Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին՝ Զգօն ըսուած գիրքը, Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւնը, որոնք թէպէտ եւ առջիններէն քիչ մը տարբեր ոճ մ'ունին, բայց անոնց նման ընտիր կարգով ու վայելուչ են: Իսկ Երկրորդ թարգմանչաց եւ վերջի հեղինակներուն մէջ աս կարգին տակ գացողներն են, Մամիլէ, Եղիշէ, Մանդակունի, Սարդիս, Իգնատիոս, Լամբրոնացի:

Գ. Ճոխ կամ Քարձը կ'ըսուի ան շարագրութիւնը՝ որուն բառերն առատ, եւ զանազան վայելուչ ածականներով զարդարուած ու կարգը շրջուն է. ինչպէս են Մակաբայեցւոց գրքերը, Կորիւն, Ագաթանգեղոս, Բուզանդայ պատմութեան շատ տեղերը, Գործոց առաքելոց, Պօղոսի ու Կաթուղիկեայց թղթերուն Յառաջաբանները: Աս կարգին տակ կ'երթան նաեւ Ս. Կիւրղի Երուսաղեմացւոյ կոչումն ընծայութեան ըսուած գիրքը, Եւադրի Խրատներն ու Ասկերերանին Յովհաննու մեկնութեան առաջին տասուիրեք ճառերը: Իսկ Երկրորդականներէն՝ Խորենացւոյն շատ տեղերը, Յովհանն կաթողիկոսի պատմութիւնը, Նարեկացին, եւ այլն:

Ա. Յոշափս քիրականութեան աշկերտներուն համար բաւական կը համարինք : Հիմայ պարզ, միջակ ու ճռխ շարադրութեանց քանի մը օրինակ դնենք :

Ա. Պարզ շարադրութեան օրինակ :

Եւ եղեւ իբրեւ չուեաց ժողովուրդն ի խորանաց իւրեանց անցանել ընդ Յորդանան, եւ քահանայքն բարձին զտապանակ ուխտին տեառն առաջի ամենայն ժողովուրդեանն : Եւ իբրեւ մտանէին քահանայքն՝ որ կրէին զտապանակ ուխտին, ի Յորդանան, եւ ոտք քահանայիցն կրելեաց տապանակին միսեցան յեզր ջրոյն Յորդանանու . եւ Յորդանան լցեալ գայր դարիւ եւ դարիւ որպէս յաւուրս հնձոց ցորենոյ . եւ կացին ջուրքն՝ որ իջանէին ի վերուստ՝ միածոյլք, անջրապետեալք, հեռացեալք յոյժ յոյժ . յԱդամիտէս քաղաքէ՝ որ է մասն կարիաթարիմայ . եւ որ իջանէինն՝ իջին ի ծովի Արաբացւոց ի ծովի աղի, մինչեւ ի սպառ նուազելոյ . եւ ժողովուրդն կայր յանդիման երեքոյի : Եւ կացին քահանայքն՝ որ կրէին զտապանակ ուխտին տեառն ի վերայ ցամաքի ի մէջ Յորդանանու պատրաստութեամք : Եւ ամենայն որդիքն իսրայեղի անցին ընդ ցամաք, մինչեւ վախճանեաց ամենայն ժողովուրդն անցանել ընդ Յորդանան :

ՅԵՍ. Գ., 14—17:

Բ. Մէջակ շարադրութեան օրինակ :

Ա. Ո՞ք ի բանակս զօրականացն անդս երկրի գնեսցէ, կամ նիւթս վաճառականաց աղխաղխիցէ . չիք ոք, չիք ուրեք : Եւ կարի իսկ յիրաւիր եւ նմանագոյնս : Ի պատերազմ եկիր, ասէ, եւ ոչ վաճառս ինչ վաճառել . զի՞ այդչափ ուրիշիս վասն տեղւոյդ, զոր յետ սակաւ մի ժամանակի թողուլ հասանիցէ . յորժամ յաշխարհ երթայցեմք, զայդ անդ արասջիր : Զնոյն եւ այժմ ասեմ ցքեղ . եթէ յորժամ ի մեր քաղաքն հասանիցէ երթալ, յայնժամ զայդ անդ կաղմեսջիր . մանաւանդ թէ չհասանիցէ ինչ քեզ այնուհետեւ աշխատ լինել, զի թագաւոր ինքնին զամենայն կազմիցէ : Քեզ աստ փոս ինչ սակաւ շուրջ հատանել բաւական է, եւ ձողիս կանգնել, ի վերայ գլխոյդ սակաւ մի զհովանոցակն

դործել . այլ շինուածոց եւ ոչ մի ինչ պէտք են : Տես , զիարդ վաչիւքն եւ սայլիւք Սկիւթացւոց աշխարհին կեանքն վճարին . զիարդ ըստ ճարակացն եւեթ փոփունեն . այսպիսի կեանս պարտ է կեալ քրիստոնէից . ընդ աշխարհս շրջել , եւ ընդ սատանայի պատերազմ տալ . զգերեալսն ի նմանէ արձակել , զվարանդիսն ի դիւրութիւն հատուցանել , եւ յամենայն երկրաւորացս ազատել : Զի՞ շինեսցես ապարանս , ով այր դու , զի՞ առաւել զանձն կապիցես : Ընդէր փորես զերկիր , եւ դնես դանձս , զի հակառակ անձինդ պատերազմ կոչիցես : Ընդէր ածիցես պարիսպ , եւ կազմիցես անձամբ անձին բանդ :

Եւ եթէ դժուարին ինչ թուիցի քեզ այս , եկ երթիցուք յայն տաղաւարս . զի եւ արդեամբք իսկ ուսանիցիս զդիւրութիւնն : Խուղս եւեթ շինեցին . եւ եթէ չուել հասանիցէ , այնպէս թողուն եւ չուեն , որպէս զօրականքն ի խաղաղութեան զբանակն թողուցուն եւ գնայցեն . քանզի այնպէս բանակեալ են . մանաւանդ թէ եւս աւելի ցանկալի տեսիլ տեսանել իցէ . քանզի եւ ցանկալի իսկ տեսիլ է տեսանել զանապատն լի վանականօք , վարկպարազի խորանօք խիտ առ խիտ թեւ հարեալ , ճիգն ի ճիգն զապարմանցն թեւակս խառնեալ , քան զզօրականացն բանակի . ուր սրահակք ձգիցին , եւ զտէգս եւ զգեղարդունս կանգնեսցեն , եւ զբնիցն դեղարդեանցն զաղեղնակապարձս կախիցեն , պղնձապատ զգլուխսն առնիցեն , եւ մեծապայծառ իմն կմբեայ վահանացն փայլիցեն , եւ կողինաւորք եւ զրահապատք շողայցեն . թագաւորին սպաս առնիցեն ի դաշտի ուրեք , ի հարթ եւ յողորկ վայրի , եւ ճաշք զճաշս մղիցեն , եւ ընթրիք զընթրեօք անցանիցեն , գուսանք երգիցեն , փողարք զճայն փողոցն նուագիցեն : Ասկայն եւ այնպէս չիցէ գեղեցիկ տեսիլն քան զայն՝ զորմէ այժմ ես պատմեմ :

ՈՍԿ · ՄԱՏ · ԿԹ ·

Բ . Արդ յորժամ հարցանիցեն զիս եւ ասիցեն . զով պաշտես դու . զի՞նչ ասիցեմ : Ասեմ զԱստուած իսրայեղի : Ասիցեն զիս . զայն Աստուած պաշտես դու , որ սատակեաց կորոյս զժողովուրդն իւր . ոչ ահա նա ասէր՝

որդի իմ է . ո՞չ ասէր՝ անդրանիկ իմ է : Զիարդ
գգուեաց սիրեաց բարձրացոյց զնա , եւ դարձեալ միւս
անդամ անդրէն խոնարհեցոյց կործանեաց զնա . արդ
դու ով ես . եթէ ի նոցանէն իցես դու , զիարդ ոչ սա-
տակեցար դու ընդ նոսա յանապատի անդ . եւ եթէ չի-
ցես ի նոցանէ , զիարդ պագանես դու երկիր Աստուծոյն
նոցա : Զի՞նչ ասացից նոցա . ստեցից , դանդաշեցից ,
ասիցեմ թէ չեմ ի նոցանէ . նա թլիատութիւնս եւ
շաբաթն եւ ընտրութիւն կերակրոցն յանդիմանեն զիս :
Եւ եթէ ասիցեմ՝ թէ ի նոցանէն եմ , ասեն . իսկ դու
զիարդ ապրեցար : Զի՞նչ ասիցեմ ցհեթանոսս՝ առ
որս եսն երթանայցեմ . ասեմ Մովսէս եմ ես : Վինին
նոքա նախատել զիս եւ ասել . Ո՞չ շատ իցէ քեզ այն ,
զի աւերեցերն դու զեգիպառ եւ սատակեցեր կորուսեր
զժողովուրդն . զի՞ եկիր դու դարձեալ այսր . միթէ
պատրել հանել կամիս դու զմեզ յանապատ , սատակել
կորուսանել եւ զմեզ եւս , որպէս սատակեցեր կորուսեր
դու զժողովուրդն՝ զոր հաներ յերկրէն Եգիպտացւոց :

ԵՓԲ · ԵԼՔ · Զ :

Գ . Բարյը շաբաթիրունեան օրինակ :

Ա . Արդ՝ ի մեւս եւս գլուխ տալուոյն , սկանէր Խոս-
րով թագաւորն Հայոց գունդ կազմել եւ զօրս բովան-
դակել : Գումարել զզօրս Աղուանից եւ զվրաց . բա-
նալ զդրունս Ալանաց , եւ զիւրոյ պահակին : Հանել
զզօրս Հոնաց , ասպատակ դնել ի կողմանս Պարսից : Ար-
շաւել ի կողմանս Ասորեստանի , մինչեւ ի դրունս Տը-
րոնի , աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն
դարձուցանէր զշինանիստ քաղաքացն եւ աւանացն ցան-
կալեաց . զշէն երկիրն ամենայն թափուր եւ աւերակ
թողոյր . ջնջել ի միջոյ ի բաց կորուսանել , խլել քակել
հիմն ի վեր ջանայր առնել : Համարէր բառնալ զօրէնս
տէլութեանն Պարսից : Ուխտ եղեալ միանդամայն վրէժ
խնդրել մեծաւ քինութեամբ զանգանելն իւրեանց ի տէ-
րութենեն . սպառ սպուռ ջանայր զվրէժ խնդրէլ մե-
ծաւ քինու նախանձաբեկ լինելով . մեծամեծս փքայր , ի
բազմութիւն զօրացն ապաստան եղեալ , եւ ի քաջու-

թիւն զօրաց յուսացեալ . վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր եւ քաջ առն եւ ծիոյ, եւ բուռն կազմութեամբ Աղուանք, Ափինք, եւ Ճիղք, Կասպք, եւ այլ եւս որ ի սմին կողմանց, զի զվոէժ արեանն Արտեւանայ խնդրեսցեն :

Օի թէպէտ եւ էր ինքն ի մեծի տրտմութեան՝ վասն բնութեան եղբայրութեան աղգատոհմին, զի հնազանդեցան եւ ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Ստահրացւոյն, եւ ընդ նմին միամտեցան : Զի էր Խոսրովու եւ դեսպան արարեալ զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեսցեն, եւ նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա թագաւորութեանն : Անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց, եւ յայնմ մարզէ, եւ յիւրեանց ի բուն աշխարհէն, եւ ի քաջ աղգաց եւ ի մարտիկ զօրացն, զի ի թիկունս հասցեն : Սակայն տոհմքըն եւ աղգապետքն, եւ նախարարքն, եւ նահապետքն Պարթեւաց ոչ լինէին ունկնդիր, զի միամտեալք եւ հաւանեալք եւ նուաճեալք էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց աղգատոհմին եւ եղբայրութեանն : Սակայն առեալ Խոսրովու զբազմութիւն զօրաց իւրոց, եւ որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թիկունս օգնականութեան, նիղակակիցք գործոյն պատերազմի : . . .

ԱԳԱԹ . Ա :

Բ . Չուեաց խաղաց գնաց Յուդաի միջնաբերդ ամրոցէ անտի եւ եկն բանակեցաւ ի բեթսակարիա, գէմ յանդիման բանակի արքային : Կանխեաց ընդ առաւօտն թագաւորն, առ զբանակն՝ տարաւ բանակեցոյց ի միջոյ անտի ըստ ճանապարհին բեթսակարիայ . եւ զզօրսն սփուեաց ճակատեցոյց ի մարտ պատերազմի . վող հարին, կազմեցին պատրաստեցին զփիղսն, ճաշակեցուցին յարիւն խաղողոյ, ի զմուռս եւ ի գինիս : Եւ կարդեցան բաշխեցին ի գունդս գունդս . եւ կարդեցին առ փիղ փիղ հաղար հաղար այր սպառազէն . եւ պահապան գլուխ գնդիցն հինգհազար հեծեալ վառեալ նժոյգ ի ձեռն պաշտպան գնդիցն . զի ուր եւ կայցեն գաղանքն կայցեն եւ նոքա, եւ ուր եւ գնայցեն՝ գնայցեն եւ նոքա : Եւ

վանդակակապ մարտկոցս մենքենայիւք ի վերայ փղացն կազմեցին, եւ զփղապանն ի վերայ դլխոյն նստուցին։ Եւ զայլ այրուձին յաջ եւ յահեակ թեւս գնդին կազմեցին։ Իբրեւ անտի արեգակն ծայրս արձակէր, առհասարակ ի զրահաւոր պատենազէն պղնձապատ վահանացն նշոյլքն զլերամբքն փայլատակէին, եւ ճառագայթք հատանէին իբրեւ ի փոյլատականց հրոյ։ Եւ երկայնէր ճակատն, զեղսր որ զբարձամբք լերանցն, որ զձորովք եւ զխորովք եւ զդաշտիւք։ Եւ խաղային յառաջ՝ առհասարակ կարգեալք եւ կազմեալք, միաբան շարժէին առհասարակ ամենեքին որ լսէին զձայն բարբառոյ բազմութեանն, զշաշիւն զինու, զշառաշիւն զերիւարացն թնդիւն, զոտնաձայն վահանաւոր վառելոցն։ Եկն եհաս Յուդա իւրով գնդաւն, կարգեցաւ կազմեցաւ ճակատեցաւ պատրաստեցաւ, յարձակեցաւ ի դիմի հարաւ գնդի թագաւորին։ յայնմ տեղւոջ յանդիման թագաւորին վեցհարեւը հեծեալ սպառազէն դիթաւալ կացուցանէր յանդիման թագաւորին։ Յայնմ վայրի դէտ ակն ի վեր ամբառնայր Եղիազար աւարան, տեսանէր մի ի գաղանաց անտի վառեալ զարդարեալ, ի զէն արքունի վառեալ, եւ նշանս արձակեալ, համարեցաւ թէ արքայն իսկ ի նմին իցէ։ Յարձակեցաւ ի վերայ գնդին՝ յաջ յահեակ կոտորեաց, չոգաւ մինչեւ եհաս ի փիղ անդր նշանաւոր, զէն վերացոյց եւ եմուտ ի ներքոյ, եհար եւ անգէն կործանեաց։ Եւ էջ նստաւ փիղն ի վերայ, եւ զնա անդէն ճմլեաց։

Ա. ՄԱԿԱ. Զ. 32. — 46.

Գ. Ի հանդիսի աստ արտաքին աշխարհականքդ յորժամ բռնաւոր մարտիկ զոք մեծահզօր յաղթական, պսակեալ ուստեք լսիցեն, համադունդ խուռնընթաց առհասարակ ամենեքեան ի վերայ դիմեն, զի տեսանել եւ զննել զմեծասքանչ զօրութիւն եւ զիմաստութիւն ճարտարութեան զամենայն մարթասցեն։ Եւ անդ է տեսանել զժողովս բիւրաւորաց սրտի մտօք ոգւովք եւ մարմնովք զիւրաքանչիւր աչս արձակեալ ի տեսանել։ զի մի ինչ իւիք իրօք յորմէ որ ինչ ի մէջ նոցա գործիցի, վրիպեալ գտանիցին։ Դարձեալ թէ եւ յերգս

արուեստականաց զոք պաճուճեալ ի մէջ նոցա պատմեսցեն, մի անգամ դէմ եղեալ առաւել քան զշանգէս ընուն զասպարիզացն տեղի. եւ յամենայն կարեւոր իրացն լքեալ, մեծաւ յօժարութեամբ եւ փութով ելեալ նստին, զի զերգս արուեստականաց եւ զերին երին զարդարելոցն առ ընդ միմեանս կշռելով՝ որ ինչ ընտիր իցէ լաւութեամբ, զայն գտանել ինչ մարթասցեն: Եւ այս արտաքին խառնաղանձ բազմութեան: Ապա եթէ ճարտարապետք հոետորացն ճախարակեայս սեթեւեթեալս բանիք փիղիսոփայք ի մէջ մատիցեն: Քանզի գոն եւ նոցա թատերք եւ հանգէսք նուագաց: Կոփիւնք եւ անհնարին կշռութիւնք եւ ընտրութիւնք բանիցն ասացելոց: Իսկ արդ եթէ ճարտարութեան բանիցն իմաստութեան, եւ քաղզրութեան երգոցն արուեստականաց, եւ բոնութեամբ քաջութեան արանցն ճգնութեանց այնչափ միագունդ միախուռն ի լսելիս եւ ի տեսանելիս մեծաւ յօժարութեամբ դիմեալ շուրջ նստեալ դեգերին, որչափ պարտ եւ պատշաճ է փոյթ եւ յօժարութիւն մեծաւ պահանջմամբ առ մեզ մատուցանել: Զի իբր ոչ եթէ լկութիւն ինչ երգոց արուեստականաց, եւ ոչ ընդունայնապարծ բոնութիւն ըմբշաց մերկամարտիկ ճգնութիւն պատմելոց եմք, եւ ոչ զճարտարութիւն հոետորացն, այլ աստուածեղէն շնորհօք ի լեզուն տատանելոց: Եւ անդ էր սքանչելիս ի վերայ սքանչելեաց տեսանել. զի այնչափ էր գոշիւնն եւ բարբառն. եւ ոչ էր ծայն չարաձայն, եւ ոչ խիստ գժկամակ լսելեաց. այլ քաղցր քան զամենայն երդս արուեստականաց ցանկալի եւ անձկալի եւ ուխտիւք խնդրելի. զի քաղցրացուցանել մարթէր զամենայն միտս եւ զլսելիս: Եւ ի վերայ այսր ամենայնի սրբագոյն սոսկալի եւ զարմանալի. եւ այնչափ լի էր անձառ ճառիւք, եւ այնչափ բարութիւնս յանձին բարձեալ բերէր, մինչ զի որք միանգամ զնոսա ընդունէին, զանձինս երկրակոխս այնուշետեւ ի մարդիկ չհամարէին. այլ ի վեր յերկինս բնակեալ ի հրեշտակաց վիճակս, զերկրաւոր բնակութիւնս յերկինս հաստատէին:

Գ. Լ. Ա. Կ. Խ. Ժ. Թ.

ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ Վ. Բ. Ա. Յ.

Վերծանութեան, որ կարդալ ըսել է, հին քերականն այսպէս կը սահմանէ. Վերծանութեան է ճառ՝ ժերմածաց կտմ շարադրաց անվետը յառաջբերութեան. այս ինքն՝ վերծանութեանը քերականութեան մէկ մասն է, որ առանց սխալի լսողին առջեւը կը բերէ թէ ժերմած, այս ինքն ոտանաւոր խօսք ըլլայ, եւ թէ շարադէր, այս ինքն կարդաւ գրուած պարզ խօսք ըլլայ:

Աղէկ կարդալու համար երեք բան պետք է. Նախ ամէն բառ իր յատուկ գրով արտաբերել: Երկրորդ՝ աղէկ շեշտել կամ բթել, եւ այլն: Երրորդ՝ խօսքին վայելչութեան համաձայն շատ կամ քիչ շունչ առնել: Առաջինը՝ կ'ըսուի ուղղագրութեան, երկրորդը՝ առաջանութեան, երրորդը՝ առանութեան:

Ա. Ուղղագրութեան վրայ:

Ուղղագրութեան գործքն է աղէկ միտ դնել որ կարդալու եւ գրելու ատեն գրելը սխալ չարտաբերուին, կամ իրարու տեղ սխալ չդրուին: Ինչպէս օն սի տեղ, եւ էի տեղ, ո՞ն չի տեղ, յն չի տեղ, զն սի եւ չի տեղ, եւ այլն:

Բ. Առաջանութեան վրայ:

Ուեր նախնիք զանազան առողանութեան նշաններ ունեին, որոնք հիմակուան ատենս չեն բանիր:

Հիմա բանաձներն են՝ շեշտն ու պարոյիը:

Ըեշտը՝ որ ասանկ (Շ) նշան մըն է, ան բառին կամ ան վանկին վրայ կը դրուի, որն որ զարնելով պիտի արտաբերուի: Անոր համար բայերուն հրամայական եղանակին վրայ, բացառական կամ սառասական մակրայներուն վրայ, ու կոչականին վրայ հասարակօրէն շեշտ կը դրուի:

Ուրդեակ, լէր դու ողորմած եւ արդար, զի բարե սմնեցի ժեղ:

Ու ո՞ն իտուցի գործել, եւ իերեցի մի:

Խսկ անուններուն, դերանուններուն ու մակրայներուն վրայ յարմարութեան ու վայելըութեան նայելով կը դրուի:

Պատրիք՝ որ ասանկ (^o) նշան մըն է, հարցական խօսքի վրայ դրուի:

Ընդէր արդուում էս: Աերա՞ր արդեւու:

Ու առանձիննես: Զի՞նը գործեցեր:

Գ.. Տըսհունեան վրայ:

Տըսհութեան նշաններուն անուններն ասոնք են. Բու-՛, Սարահեր, Աեր, Վէրջակեր:

Ա երջակերը՝ որ ասանկ (^{:)} նշան մըն է, ան ատեն կը դրուի, երբ որ խօսքն ամբողջ կը լմրննայ, ուր մեծ հանգիստ կամ շունչ պէտք է առնել, ինչպէս անթիւ տեղեր օրինակը տեսար:

Այերը՝ որ ասանկ (^o) նշան մըն է, ան ատեն կը դրուի, երբ որ թէպէտ խօսքին իմաստն ամբողջ է, բայց ուրիշ ամբողջ խօսքին մասն է, ուր քիչ մը կանկ առնելու է. ինչպէս,

Ուրի ինորագէտ հնապանդ է հօր. ուրի անհնապանդ է ինը բուսար եղիցի:

Ուրի իմաստուան արախ առնէ սնայր. ուրի անօիդ արամունիւն է հօր:

Սարահերը՝ որ ասանկ (,) նշան մըն է, ան ատեն կը դրուի, երբ որ խօսքն իր գիմաւոր բայն ունի, բայց միտքն ամբողջ չէ, եւ ուրիշ խօսքէ կախում ունի, ուր քիչ մը պէտք է կենալ՝ առանց մեծ շունչ առնելու:

Աժ զնա յերաւառդէմ, եւ իացոյց է վերայ աշուարակի պաճարին, եւ առէ շնա. ենե ուրի ես Աստուծոյ, արէ շտեղ ասողի է վայր:

Բառնը՝ որ ասանկ (^o) նշան մըն է, շատ տեղ կը բանի:

‘Ետիս երբ որ բային ու իր խնդրին մէջ ուրիշ պարբերութիւն մտնելու ըլլայ. ինչպէս,

Աժնայնի՝ որ ինդրէ է ուն, առար: Հոս աժնայնի խընդիր է տալ բային. որ ինդրէ է ուն՝ երկուքին մէջը մտեր է:

Երկրորդ կը դրուի ստորակէտի տեղ, երբ որ երկու գիմաւոր բայ իրարու շատ մօտ ըլլան :

Յո՞ր առան մասնիցէ՞՝ անդ ադջէ՞ :

Տեսանելով աւեսցէն՝ եւ մի աւեսցէն, եւ լոելով լուիցէն՝ եւ մի՛ իմասցէն :

Երրորդ՝ երբեմն սկզբնաւորական շաղկապներու վրայ, այսպէս, Արդ՝ Եւ այդ՝ Իսկ արդ՝ եւ այլն :

Տրոհութեան կը վերաբերի գիտնալը թէ բառերն ինչպէս բաժնելու է որ բաժանումը կամ գրադարձը սխալ չըլլայ :

Երդ այնպէս պէտք է բաժնել, ինչպէս որ կ'արտաբերուի : Ուստի ինչպէս որ խօսքի մէջ չենք ըսեր բար - է, դան - աի, դիոր - ուն - իւն, հապա՝ բա - ըէ, դանաի, դի - ուս - նիւն, նոյնպէս ալ դրելու ատեն բաժնէ :

Ուստի թէ որ բառ մը երկու ձայնաւորի մէջ մէկ բաղաձայն ունենայ, ան բաղաձայնը ետքը եկող ձայնաւորին վրայ պէտք է դնել . ինչպէս սիրո՞ւ՝ սի - ըսդ, պառի՞ւ՝ ալա - պիւ :

Ես կարգէն դուրս կ'ըլեն բարդ բառերն ու բաղադրեալ մասնիկները, որոնց բաղաձայնը թէեւ երկու ձայնաւորի մէջ իյնայ, չիզատուիր . ուստի չիբաժնուիր ըն - դունայն, յայ - նարյաէ, ա - նարժան, ա - նարդ . հապա՝ ընդ - սանայն, յայն - արյաէ, ան - արժան, ան - արդ :

Դայց թէ որ բառ մը երկու ձայնաւորի մէջ երկու կամ երեք բաղաձայն ունենայ, ան բաղաձայններէն միայն մէկը ետեւի ձայնաւորին քովը պէտք է դնել . ինչպէս եղբայր՝ եղ - բայր, նարդան՝ նարդ - ման :

Օմէ որ երկու ձայնաւոր զիր քովէ քով դալու ըլլան, ան ատեն կրնան իրարմէ զատուիլ . այսպէս, դոր - ծէ - ին, Ար - ըէ - ամ :

Դայց առ, եւ, առ, առա եւ առէ երկրարբառ ձայնաւորներն իրարմէ չեն զատուիր, ուստի չիբաժնուիր ա - ած - պիս, համ - բա - ել, սորեղդու - ած, ի բարյու - է . հապա առ - ետիս, համ - բաւ - ել, սորեղ - ծու - ած, ի բար - յու - է :

Դաղաձայն, զիրը երբ որ բառի մը ետքի զիրը ըլլայ՝ ձայն չիհաներ . ինչպէս, ծառայ, որդոյ, եւ այլն :

Բայց թէ որ բառի մը սկիզբը դրուելու ըլլայ՝ բարակ հի ձայն կը հանէ . այսպէս , Յակով , Յարուշին : Անոր համար յ բաղաձայնը թէեւ երկու ձայնաւորի մէջ մըտնէ , ետքի եկող ձայնաւորին վրայ չիդրուիր , հապա առջինին , այսպէս , արտայ - ունիւն , ծառայ - ական :

Աս ալ պէտք է գիտնալ որ բառերը բաժնելու ատեն ուր որ և զօրութեամբ կայ , պէտք է ներգործութեամբ գնել . այսպէս , զնա՝ ըշ-նա , դնել՝ տը-նել :

Մնացած մէկ +անէ նշանադիրներուն վրայ :

Դիւրին կարդալու համար քանի մը նշանագիրներ ալ կան , որոնց անուններն ասոնք են Հակակետ , Ենթաճայ , Գակադէն , Պատուադէր , Երկորեակ , եւ այլն :

Ո՞սկէիւրը՝ որ ասանկ (') նշան մըն է , իին ետեւը կը դրուի , երբ որ նախդիր կը լլայ . այսպէս , 'է , առ 'է , եւ այլն . բայց ասիկայ աւելորդ բան մ'ըլլալով՝ կամաց կամաց կը վերնայ :

Ենթաճայ՝ որ ասանկ (~) նշան մըն է , տողին վերջի ծայրը կը դրուի . երբ որ բառը պէտք լլայ կիսել , ու կը ցուցընէ որ բառն ամբողջ չէ :

Փակադէնը՝ որ ասանկ () նշան մըն է , ան ատեն կը գործածուի , երբ որ խօսքի մէջ դրսէ ուրիշ խօսք մը կը մտնէ , որ ան կամ առջի խօսքին իբր թէ մեկնութիւն կամ համառօտ ծանօթութիւն մըն է . ինչպէս ,

Ընդէր ու կարէ առնել է մէջ Երիեւն Աստուծոյ զայն (որպէս ասաց ո՞ն է սըմոցն) զըր կարող է առնել անծովուն կամ շան :

Պատիւ որ ասանկ (~) նշան մըն է , համառօտուած բառերուն վրայ կը դրուի որ ամբողջ կարդացուին . այսպէս , Յա , Յիսուս , Նշ , Նոցա . Շա , ամենայն , իսկ Պատուադէն՝ վրան պատուով աննշան ձեւ կամ գիր մըն է , որն որ ամբողջ բառի տեղ կը դրուի . այսպէս , Շա , այս ինչն . եւ այլն : Բայց ասոնք կամաց կամաց կը վերնան :

Երկորեակ կամ Զոյդ գէնը՝ որ ասանկ (~) նշան մըն է , ան ատեն կը դրուի , երբ որ բառն ամբողջ չիգրուիր . այսպէս , Յովհէ . Ոսկեր . այս ինքն՝ Յովհան Ոսկեբերան :

ՅԵՒՅԵԼԻ ԱՅԾ

— ՀՅՈՒՅՑ —

ԶԱՆԱԶԱՆ ԶՐՈՅՑՔ Ի ԽՐԱՏ ԵՒ Ի ԶԲՈՍԱՆՍ
ԱՇԱԿԵՐՏԱՑ

Ա.

ՅԱԴԱԳՍ ԱՍՏՈՒԾՈՅ

Վարդապետ, Աշումիք:

Վարդապետ. Օքնա կարծես, որդեակ, յորժամ
շուրջ հայեցեալ տեսանես զմարգագետինս ծաղկօք զար-
դարեալս, զծառս պտղովք լցեալս եւ զդաշտս արմտեօք
առատացեալս։ Յորժամ տեսանես զձկունս ի ջուրս,
եւ զթոչունս յօդդ։ Կարծիցես զայս ամենայն ըստ դի-
պաց եղեալ։

Աշումիք. Յետին անմտութեան է յայդպիսի ան-
աստուած խորհուրդս մտաբերել։

Վ. Ապա ով ոք գոյացոյց զերկինս եւ զերկիր, եւ
որ ինչ միանգամ ի նոսա արարածք իցեն։

Ա. Աստուած, որ միայն կարէ ի չդոյէ ի գոյ
ածել զարարածս։

Վ. Արդարեւ յիրաւի Աստուծոյ արարածք են եր-
կինք, աստեղք, արեդակն եւ լուսին։ Երկիր, հուր,
ջուր եւ օդ։ Մարդիկ եւ անասունք, ձկունք եւ թռչունք
երկակենցաղք, որդունք եւ ճճիք բաղմոտանիք։ Բոյսք,
ծառք, պտուղք եւ արմտիք։ Ծով եւ լիճք, լերինք եւ
ձորք, վեմք եւ մետաղք։ Այլ արդ՝ աղէ ասա ինձ, գիտես
համբուն՝ թէ է Աստուած։

Ա. Այս յանհամար գործոց նորա հաւաստեաւ զի-
տեմ թէ է Աստուած։

Բ.

Վ. Ո՞վ ստեղծ զքեզ։

Ա. Աստուած, որ ետ ինձ զհոգի եւ զմարմին,
զկերակուր, զըմպելի եւ զհանդերձ։ Եւ պահէ զիս ողջ
մարմնով, եւ այլովք եւս բիւրապատիկ երախտեօք ճո-
խացուցանէ։

Ա. Ո՞իթէ պատուականագոյն ես դու քան զան-
բան կենդանիս :

Ա. Այսուհետեւ զի մարդ եմ, եւ դոյ յիս հոգի բանական,
յորմէ վրէպ են ամենայն ազգք կենդանեաց :

Ա. Չիցէ՞ արժան մեծապէս դոհանալ զԱստուծոյ
մերմէ՝ զՀօրէն գթութեանց, որ այսպիսի անզուգական
պատուով պատուեաց զմեզ :

Ա. Երդարեւ որ ոչ լիաբերան դոհանայ զԱստուծոյ,
անարժան է զարեւ տեսանելոյ, եւ անարժան է կենաց :

Դ.

Ա. Ո՞ւր է Աստուած բարեխնամ տեսուչ մեր :

Ա. Աստուած մերձ է առ ամենեսեան, որպէս եւ
Առաքեալ վկայէ, թէ Ու Եւուի իսկ է յիւրագոնչիւր ու-
նեւէ ի հնջ: Զիք տեղի խաւարին՝ աներեւոյթ յաշաց նո-
րա: Եւ ոչինչ կարէ թադշել ի նմանէ, ոչ բան, ոչ
խորհուրդ, եւ ոչ ինչ ի ծածկելոցն ի սրտի:

Ա. Օգոյշ լեր, որդեւակ, ոչինչ գործել կամ խոր-
հել յորոց օրէնքն Աստուծոյ հրաժարեցուցանեն զմեզ:
Զի թէպէտ եւ կարես խաբել զմարդիկ, այլ զԱստուած
ոչ բնաւ: Այլ յորժամ բարիս գործես, ուրախ լեր, զի
վկայ ունիս քեզ զամենատես ակն, որ հատուցանէ իւրա-
քանչիւր ըստ գործս իւր:

Դ:

Ա. Կարես տեսանել զԱստուած զգալի աչօք:

Ա. Ոչ բնաւ, զի անմարմին է, եւ որոյ ոչ է մար-
մին, աներեւոյթ է աչաց, այլ մտաց իմանալի է:

Ա. Ո՞չ ապաքէն եւ ի քեզ իսկ կրի բնութիւն իմն՝
որ ոչ անկանիցի ընդ տեսլեամբ ական:

Ա. Այսուհետեւ հոգին, որ է պատճառ կենդանութեան
մարմնոյ:

Ա. Ո՞րչափ է զօրութիւն Աստուծոյ:

Ա. Աստուծոյ զօրութեան չիք սահման: Ամենայնի
կարող է, եւ չիք ինչ անհնարին առ ի յԱստուծոյ: Վասն
որոյ տէր ամենակալ է անուն նորա:

Ա. Ապա զգոյշ լեր, զի մի արտաքոյ օրինաց նորա
գործելով անհաճոյ լիցիս յաշս նորա: Եւ ովք ոք յա-

բարածոց կարէ ապրեցուցանել զքեզ ի ձեռաց նորա: Զօրացիր ի հրամանս աստուածայինս, եւ առաւել յԱստուծոյ երկիցես քան ի մարդկանէ:

Ա. Օյն է ինձ երկնչել, եթէ Աստուած ամենակալ ընդ իս է: Ճշմարիտ է բան Առաքելոյն, որ ասէ. Ենէ Աստուծ է մէր ի՞յս է, ով էցէ մէղ հակառակ: Վասն որոյ այր քաջայոյս յԱստուած, խաղաղ եւ անդորր սրտի վիճակի:

Ե.

Ա. Օիարդ կարես գիտել, եթէ բարերար է Աստուած:

Ա. Ի բաղմապատիկ երախտեաց նորա, յորս օր ըստ օրէ վայելեմք անբաւ առատութեամք, մինչեւ անաստուած մտաց է յայսպիսի եւ յայսչափ երախտեաց միջի յերկբայս անկանել զբարերարութենէն Աստուծոյ:

Ա. Վապա Աստուած ինամէ զմարդիկ:

Ա. Այս, Աստուած նախախնամող զօրութեամք վարէ ոչ միայն զմարդիկ, այլեւ զանասունս եւ զանշունչ տարերս: Զայսոսիկ արարածք իւրեանց գեղեցիկ կարդաւորութեամք իրեւ. խօսուն բերանով զարարչէն պատմեն:

Ա. Ո՞վ ոք ծայրագունին արժանաւոր է սիրոյ:

Ա. Ո՞իայն Աստուած, զոր պարտիմք ոգւով չափ սիրել, ի վեր քան զծնողս եւ զամենայն սիրելիս, վասն աղգի աղգի ինամոց նորա առ մեղ.

Ա. Վրդարեւ ոչ բաւեմք սիրել զնա եւ պատուել արժանի պատուով:

Զ.

Ա. Ո՞իթէ ամենեքեան հաճոյ են Աստուծոյ:

Ա. Ոչ. միայն աստուածասէրք՝ որք Աստուծոյ իրեւ հօր հնազանդին, սիրելի են նմա: Իսկ չարասէրքն, որք ապստամք են ի հրամանաց նորա, եւ անպատկառ յօրինաց ի ներքս ի մեզ բնաւորելոց, ատելի են յաչս նորա. զի Աստուած սուրբ է, եւ ատէ զամենայն անօրէնութիւն:

Ա. Եթէ Աստուած արդար է, ապա դատի զմեղաւորս: Եւ զի՞նչ պատուհաս սահմանեաց վասն մեղաւորաց:

Ա. Կայ մնայ մեղաւորաց արդար դատաստան եւ դառն պատուհաս յաւիտենից, զոր ունին լուծանել ի կեանս որ յետ մահու:

Ա. Եպա զգոյշ լեր մի ինչ գործել անհաճոյ Աստուծոյ, զի վերջին սահման չարեաց է անկանել ի ձեռս բարկութեան ամենակալ դատաւորին:

Է.

Ա. Օքնչ խոստացաւ Աստուած արդարոց :

Ա. Օանանց երանութիւն ի փառս արքայութեան երկնից :

Ա. Ճշմարտիւ այդ այդպէս է :

Ա. Այս, զի Աստուած խոստացաւ անսուտ բերանովն, եւ հաստատեալ է ի հոգիս առաքինեաց թէ վրիպէ ի խոստմանցն եւ ոչինչ, այլ ամենայն անվորէպ ի գլուխ ելանէ :

Ա. Ո՞վ զարթոյց զմեղ յաւետիս խոստմանցս այսոցիկ :

Ա. Յիսուս Քրիստոս, որ հազար ութհարեւը յիսուն եւ երկուք ամօք յառաջ եկաց ի Հրեաստանի, եւ իւրով վարդապետութեամբ եւ մահուամբ զյոյս յարութեան եւ արդար հատուցման մեղ հաւատարմացոյց :

Ա. Գոհացիր զպարգեւացս, եւ զամենայն աւուրս կենաց քոց կատարեա զկամս նորա, որպէս զի մասին սրբոց՝ որ պատրաստեալ է պատուիրանապահ համբերողաց, արժանի լիցիս:

Ը.

ՅԱԴԱԳՍ ՅԱՌՆԵԼՈՅ Ի ՔՆՈՅ

ՊԵՊՐԱԿ, ՊԱՊԱՂԱԿ :

ՊԵՊՐԱԿ. Օարթիր, Պաւղէ, զարթիր, ընդէր ննջես. Ժամ է արդ ի քնոյ զարթնուլ:

ՊԱՊԱՂԱԿ. Կնա, Եղբայր, գնա, մի աշխատ առներ զիս, զի տակաւին չեւ է իմ բաւական ի քուն եղեալ:

ՊԵՊ. Կիշերն էանց, եւ առաւօտն ծագեցաւ, Ժամ է արդ երթալոյ ի դպրոց:

Պատ . Ծոյլ արա ինձ սակաւիկ մի , զի յերեկոյին
կարի վաստակեալ մահի ի քուն :

Պէտ . Ոչ թողից զքեղ մինչեւ ոչ ելանիցես յան-
կողնոյ : Ոչ գիտես թէ զիարդ իմաստունն յանդիմանա-
կան բանիւ վարի առ ծոյլսն , թէ որպէս Դուռը շրջեն է
ծինուզ , այսպէս վառ է ճանին իւր :

Պատ . Օի՞ եղեւ քեղ այսօր , զի այսպէս վաղ
քաջ ի հաւախօսի եկեալ՝ չտաս ինձ Ծոյլ առ վայր մի
հանդշել յաշխատութենէս :

Պէտ . Օի՞նչ ասես , ապաքէն անց պահ մի ա-
ռաւոտուն :

Պատ . Կանի՞ ժամք են աւուր :

Պէտ . Երեք , եւ գրեթէ ուսայ ի բերան զհամարն իմ :

Պատ . Ա այ ինձ զի հեղգութեամբ ծախեցի զժա-
մանակն : Հարեայց վաղվաղակի . ներեա սակաւիկ մի
մինչեւ պատրաստ լինիցիմ :

Թ.

Ասպուածագուր , Խոսրով :

Ասպուածագուր . Ե՞րբ զարթեար այսօր ի քնոյ :

Խոսրով . Ի մետասաներորդ ժամու գիշերոյ :

Ա . Օի՞նչ գործ գործեցեր՝ իբրեւ յարեար ի քնոյ .

Խ . Եախ առաջին գոհացայ զԱսուուծոյ , որ եւ
ինձ զգիշերս խաղաղութեամբ անցուցանել :

Ա . Երդարեւ մեք բանաւորքս պարտիմք անպակաս
գոհութիւնս առ Աստուած մատուցանել , վասն անբաւ
երախտեաց նորա առ մեղ : Զի՞նչ յետ այնորիկ :

Խ . Երկի զինեւ զհանդերձս , լուացի զձեռս եւ զե-
րեսս իմ . եւ ապա սկսայ ուսանել ըստ հանապազորդ
կարգի :

Ա . Իարւոք է , ջանա այսպէս օր ըստ օրէ յառա-
ջադէմ լինել :

Ժ.

ՅԱՆԱԳՍ ԸՆԹԵՐՑՄԱՆ

Մարկոս , Թադէոս :

Մարկոս . Ե՞լքայր , զի՞նչ է այս՝ զոր ի ձեռին ունիս :

Թադէոս . Կերականութիւն , որպէս եւ տեսանես :

Մ. Կիտես ի բերան զհամարն :

Թ. Դեռ եւս ուսայ, եւ այժմ պատրաստիմ երկրորդել զմիանգամ ուսեալն. զի հաստատուն լիցի եւ մի հարեւանցի ինչ :

Մ. Ընդէր հանապաղօր կրկին ուսանիմք, դոր յերեկին ուսաք :

Թ. Այնպէս հրամայեաց վարդապետն :

Մ. Լուայ զպատուէրն, այլ զպատճառն հարցանեմ, թէ ընդէր այնպէս հրամայեաց :

Թ. Առ ի սերտել ի միտս զնորոգ ուսեալն : Եթէ ոք ոչ ոռոգէ օր ըստ օրէ զնորատունկ բոյս՝ վաղվաղակի ցամաքի . նոյնպէս եւ որ զմիանգամ ուսեալն թողուանյիշատակ, դիւրաւ մոռանայ :

Մ. Աղաջեմ զքեզ, պատմեա ինձ եղբայրաբար սիրով, թէ զիարդ ուսանիս, զի տեսանեմ զքեզ զբազմօք աշակերտակցօք իմնվք յոյժ գերազանցեալ :

Թ. Ահա պատմեմ քեզ զամենայն յանկեղծ մտաց : Զի ոչ շատանամ մի անգամ ուսանելով, այլ երկիցս եւ երիցս փորձեմ զնոյն, զի ի խոր տնկեսցի ի միտս իմ :

Մ. Հանկամ հարցափորձիւ քննել զքեզ, եւ տեղեկանալ վասն աւուրս ընթերցուածոյ :

Թ. Եւ ինձ կարի ախորժելի է, այլ դու քաջ միտ զիր, զի եթէ անկանիցի բառ կամ բան ի բերանոյ իմմէ յիշեցուսցես անթերի :

ԺԱ.

ՅԱՂԱԳՍ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԱՌ ԾՆՈՂՍ

ՎՐԲԱՆԷ, ԱՐՔԱՊԱՀԷ :

ՎՐԲԱՆԷ. Հայր քո, որպէս լուայ, դարձաւ յեղիպտոսէ :

ԱՐՔԱՊԱՀ. Այս դարձաւ, յաւուր ուրբաթույ յերեկոյի :

Վ. Ապաքէն ծանր է քեզ գալուստ նորա :

Ա. Ընդէր, մանաւանդ թէ կարի ուրախ եմ ընդ գալուստ նորա : Բայց զի՞ է քեզ, զի յայդպիսի միտս բերիս :

Ա. Խերեւս ի լինել նորա ի բացէ, կարէիր ըստ
մտի շրջել:

Ա. Ոչ գիտեմ զի՞նչ ակնարկէ ըստ մտի շրջելն։
Ես ի մի եւ ի նոյն շաւղաց վերայ գնամ եթէ հեռի
իցէ հայր իմ եւ եթէ մերձ։ Խաղամ, եթէ դէպք ժա-
մանակին այնպէս պահանջեն։ Ոչ բնաւ մեկնիմ ի տա-
նէ, բայց եթէ վասն կարեւոր պիտոյից հրամանաւ մօր
իմոյ։

Ա. Եւ մօր եւս քո այնչափ հնազանդ բարս ցու-
ցանես։

Ա. Ոչինչ խորեմ ընդ հայր եւ ընդ մայր։ Ոչ ա-
պաքէն միապէս օրինադրեն տասնաբանեայ պատգամքն
զհօրն եւ զմօրն պատիւ, թէ Պատուեա զնայր ու եւ զմայր։

Ա. Արդարեւ զամենայն զոր ասացեր, արդար խօ-
սեցար։

Ա. Ծնդէր այդչափ հակառակեցար յայն ինչ, զո-
րոյ ինքնին գիտէիր զՃշմարտութիւնն։

Ա. Ես ի ճանաչել զանշարժութիւն մտաց քոց
ի բարին։

ԺԲ.

ՅԱԴԱԳՍ ՑՐՏՈՒԹԵԱՆ ԶՄԵՐԱՅՆՈՅՆ

ԳՐԷՒՄՆ, ՆԵՐԱԷՆ :

ԳՐԷՒՄՆ · Տես, քանի բռնութիւն է օդոյ, որպէս
սաստկութեամք շնչէ հիւսիս։ Ոչ ապաքէն լաւ եւս էր
ամենայն սառնամանեաց եւ դառնաշունչ օդոց անբաւ
հեռաւորութեամբ մեկնել ի սահմանաց մերոց։

ՆԵՐԱԷՆ · Ոչ այդպէս, զի ի բաղում իրս պիտանի
է ձմեռն եւ սառնամանիք ցրտութեան։

Գ. Յի՞նչ իրս, աղէ ասա։

Կ. Բռնութիւն հողմոյ ուժգին բախելոյ մաքրէ
զօդն ի վեասակարութենէ, զի եթէ օդ անշարժ կայր
ի կայանի, անթիւ մահունս դործէր ապականարար գո-
լորշեօք։

Գ. Այլ զի՞նչ օգուտ մատակարարէ ձմեռն ան-
բերելի սառնամանեօք։

‘Ա. Ի՞ոյսք եւ ամենայն ծառատունկք եւ երկիր ամենայն եթէ ոչ առցեն զձմեռն եւ զանձրեւ ոչ կարեն քաջ պաղարերել։ Զի եթէ ձիւն եւ սառնամանիք ոչ պընդէին զլերինս, արմատք խոտոց ոչ պարարէին։

Գ. Եւ ընդէր է զի ի ձմերայնի երկիր պնդի, եւ չուրք պաղին սառնամանեօք։

‘Ա. Լոյն է պատճառն, զի ի ձմերայնի ծառագայթք արեգական կողմնակի անկանին յայն մասն երկրի, ուր ձմեռն զօրացեալ իցէ։ Եւ կողմնակի անկեալ ծառագայթք տկար են ի ջեռուցանել։ Աստի է եւ անզուղութիւն տուրնջեան եւ դիշերոյ, զի ի ձմերայնի կարծին աւուրք եւ յամարայնի երկարին։

ԺԴ.

ՅԱԴԱԳՍ ՃԱՇՈՒ

Մէտայել, Գաբրէել։

Մէտայել։ Խնդիր մի փոքր խնդրեմ ի քէն, աղաշեմ մի անտես առներ։

Գաբրէել։ Ես աղաչեմ զքեզ մեկն եւ յայտնի ասել զամենայն, զի անխափան կատարեմ։

Մ. Խնդրեմ ի քէն այսօր ի միասին ճաշել։

Գ. Իարւոք է, այլ զգոյշ լեր մի ինչ առաւելքան զայլ աւուրցն սովորութիւն պատրաստել։

Մ. Դու ինքնին գիտես, թէ որպէս ի մանկութենէ անտի իմմէ վարժեցայ ի ծնողոց իմոց պարկեշտ լինել ի կերակուրս եւ յըմպելիս։

Գ. Վանի ժամք են աւուր։

Մ. Երեք։ Մերձ է ժամ ճաշուն, եկ երթիցուք ի տուն։

Գ. Խմ այսպէս լուեալ է, թէ արեւմուտք այլազդ վարին ի թիւս ժամուց։

Մ. Լոյն այնպէս է. զի առ նոսա հասարակ օր եւ հասարակ գիշեր միշտ յերկոտասաներորդ ժամու լինի։ Իսկ առ մեզ ժամք հասարակ աւուր եւ հասարակ գիշերոյ միշտ փոփոխին։

ԺԴ.

ԺԱՄ ՃԱՇՈՅ

ՄԵ+ԱՅԵԼ, ԳՐԱԲՐԵԿԵԼ, ԵՎԲԱյՐ ՆԱՐԱ ՌԱՖԱՅԵԼ, Եւ ՃԱՌԱՅ ՈՒ
ՊԵՐԵՐՈՍ ԱՆԱՌՆ:

Գ. ԸՆԴԵՐ անցեր զբանիւ քով, եւ ետուր յօրի-
նել խորտիկս զանաղանս եւ բաղմապատիկս, միթէ դայլ
կարծիցես զիս Եղբայր:

Մ. ՎՐԱՎ լիցի, սակայն եւ ոչ անարին ճպուռն,
որ առանց կերակրոյ զօդն միայն ծասքելով, կամ ի ցո-
ղոյ երկնից կերակրի:

Գ. ՈՒՐ է Եղբայր քո կրտսեր ՌԱՓԻԱՅԷԼ:

Մ. ՎՐԱ առ մեզ է, այլ քանզի կարի փոյթ է
յուսմունս, հրաժարեալ է ի մարմնական զբաղմանց:

Գ. ՊԵՄՈՐՈՍ, գնա ազդ արա նմա զեկաւորութիւն
իմ եւ թէ ժամ է ճաշոյ:

ՌԱՓԻԱՅԷԼ. ՈՂՋՈՅՆ իցէ:

Մ. Եւ Գ. ՈՂՋՈՅՆ է. Եկ առ մեզ, բաղմեսցուք:

Մ. ԿԵՐԵՑԷՔ ինձ, զի ոչ իմացայ զգալուստ ձեր,
եւ ոչ հանդիպեցայ ձեզ ըստ արժանի ընդունելութեան
ողջունիւ սիրոյ:

Գ. Կանխաւ գիտեմք մեք թէ որպիսի սերտիւ սի-
րեմք զմիմեանս, եւ վասն ակամայ տգիտութեան ոչ ոք
մեղադիր լինի սիրելոյ:

Մ. ՎՐԴ՝ քանզի ամենայն ինչ պատրաստ է աղօթս
արարեալ բաղմեսցուք ի սեղան:

Մ. ՕՀԱՅՐԴ է թանն:

Գ. ՅԱյժ բարւոք է, եւ ինձ կարի ախորժելի:

Մ. ՊԵՄՈՐՈՍ, առեալ զսկաւառակս՝ բեր այլ փոխա-
նակ նորա:

ԺԵ.

Մ. ՎՐԴ՝ բաժանեցի զմիս որթուն, զոր մասն ա-
ռաւել ախորժես:

Գ. ՈՒՐՆ եւ իցէ, ինձ մի եւ նոյն է:

Մ. ՎՐՋԻՔ զայս մասն, զի փափուկ է եւ համեզ:

Գ. ՎԵՃԱՊԷՍ ցաւ է մեզ, զի զանձնէ քեզ ոչինչ
փոյթ է. Ես ինքնին մասնաւորեցից քեզ զմեւս մասն:

Մ. Ես ի սեղանի չըրաժարիմ ի կերակրոց :

Ռ. Այլ զի՞ է քեզ զի զերեսս քո ոչ տեսանեմ զուարժագին, որպէս յերէկն եւ յեռանդ : Գործ զկրիսիպոսին գործես :

Գ. Առակօք բացեր զբերան քո : Այլ չգիտեմ ես յինչ ակնարկէ առակս :

Ռ. Պատմեն զկրիսիպոս փիլիսոփայէ, թէ այնպէս զմայլէր մտօքն յուսմունս իւր, մինչեւ առ սեղանով բազմեալ՝ սովորմահ լինէր, եթէ ծառայ նորա ոչ տանէր զկերակուրն ի բերան նորա :

Գ. Ինձ այսպէս թուի, թէ որպէս ոչ ուրեք այսպէս բարեկամաբար հիւրընկալեալ մեծարեցայ, նոյնպէս ոչ երբեք այսչափ կերայ, որչափ այսօր : Յիմ վերայ արդարանալ կարծեմ զառասպելն թէ +* Ծարայէ որիո՞ն է, մեր Շիրակայ աճքարդն չկ՞ն :

Մ. Աղաչեմ զձեզ պատմեցէք ինձ զինչ խրատէ առակս :

Գ. Պատճառս ետու քեզ քննել զպատմութիւն Մովսիսի խորենացւոյ բաց զառաջին հատորին զմետասաներորդ պրակն, եւ անտի տեղեկանաս *:

ԺԶ.

Մ. Ո՞ն յերկուց աստի հաճոյ թուի քեզ, միս եղին, եթէ ոչխարին :

Գ. Միս եզին առաւել ախորժելի է ինձ, այլ զոչխարինն առաւել առողջարար առեն :

Մ. Այսպէս եւ ես զխողենին յոյժ սիրեմ, այլ վեասակար պատմի առողջութեան :

Ռ. Հիրաւի է զարմանալ, թէ ուստի ի քիմն մարդկան այսչափ զանազանութիւն : Հազիւ գտանին յաշխարհի երկուք ոմանք, որք միաբանիցին ի ճաշակս կերակրոց :

* Դէմք առակիս առ շատակերան հային, որ առ ժամանակօք Մովսիսի խորենացւոյ յաճախեալ էր ի բերանս գեղջկաց, զի Արամայիս զսրդի իւր զԾարայ զայր շատակեր եւ զյոլովածին առաքէ ի դաշտ մի արգաւանդ եւ բերրի, յագեցուցանել զանյագութիւն նորա ի պարարտութենէ երկրին : Խոր. Ա. 44.

Մ. Գիտեմ զբաղումն, որք եւ զպանը հոտն առնուլ անգամ ոչ հանդուրժեն:

Գ. Անաւանդ տեսի ես զոմանս, որք բնաւ հաց եւ ջուր ոչ ճաշակեն:

Մ. Ե. Յերկարել մեր զբանս, մուացաք զուտելն:

Գ. Շնորհակալ եմ, եղբայր, այնպէս յագեցայ, զի այլ ոչինչ կարեմ ուտել:

ԺԷ.

ՅԱԴՎԱ ԶԲՈՍԱՆԱՑ

Հայր, Ուրիշ:

Հայր. Ես ահաւասիկ ելանեմ զբօսանել, դա՞ս եւ դու ընդ իս, որդեակ:

Ուրիշ. Եհաւասիկ եմ, հայր, երթիցուք վաղվաղակի:

Հ. Եւասիկ անցաք պահ մի, եւ երեւի մեղ ծով:

Ո. Ո՞վ քանի ահագին եւ լայնածաւալ է ծով. միթէ ունիմք անցանել ընդ այս ծով:

Հ. Ե. Եկ առ իս, եւ կալեալ զձեռանէ քումէ այնպէս մտցուք ի նաւակն, մի գուցէ անկանիցիս ի ծով անդր:

Ո. Ո՞իթէ խոր է ջուրն:

Հ. Յոյժ խոր է:

Ո. Տեսանեմ ես, հայր, զբաղմութիւն նաւաց մեծամեծաց եւ փոքունց: Ուստի դան, կամ յո՞ երթան:

Հ. Ո՞եծամեծ նաւքն՝ զոր տեսանես, յածին ընդ աշխարհ ամենայն, զի ծով է շուրջ զաշխարհաւ, վաճառս բերեն եւ տանին: Իսկ փոքրիկ նաւակք այսր անդր շրջեցուցանեն զմեղ առ ի զբօսանս:

Ո. Տեսանես, հայր, զբաղմութիւն նաւակաց, որք դան այսր լի մեծամեծ ձկամբք: Եւ զի՞նչ է այն որ ի խելս նաւին:

Հ. Եղքա ձկնորս ասին, եւ գործի նոցա ուռկան է:

Ո. Օխարդ կարեն ուռկանաւ ձկունս որսալ:

Հ. Երկանեն զուռկանս ի ծով, եւ ի չորից տըսնոց ձդեն ի ցամաք բաղում աշխատանօք, եւ որ ինչ ի ներքս փակի, զայն ըմբռնեն եւ վաճառեն:

Ո. Աղաչեմ զքեզ, հայր պատուական, զի կալեալ
զձեռանէ իմմէ հանցես ի ցամաք, մի գուցէ անկանիցիմ
ի ծով :

Հ. Բարւոք է, ոչ թողից զքեզ անկանել

**ԶՈՒԱՐՃԱԼԻ ՏԵՍԻԼ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ
Ա.**

ՏԵՂԵՐ+ :

ԸՆԴՀԱՅՆՈՒՐ աշխարհս յերկուս մասունս բաժանի, յեր-
ինս եւ յերինք : Յերկինս տեսանեմք զարեժան եւ զըստին
եւ զատիւղս : Երկիր ընդ այլոց տարերաց, այս ինքն հրայ,
ջրայ եւ օդայ, ի պատճառս մարդոյ ստեղծաւ : Ի յերկրի
դժանին լերին+ անտառովք եւ խոտովք, քարամբք եւ մե-
տաղօք . յոր+ ծաղկամբք եւ սիզովք . դաշտ+ ագարակօք
եւ արմտեօք, պարտիզօք եւ բանջարօք . ծով, լեճ+, գետ+
եւ առանց, կենդանին+ եւ հարդեի : Ամու+ վերանան յօդս,
Ռազմուն+ թոշին ի ներքոյ երկնից, լըրտոտանին+ գնան կամ
ընթանան . առանց սողան ի վերայ երկրի : Մարդեի ժա-
ռանգեն զբնաւ տիեզերս :

Բ.

ԱՐԵՔԱԲԻՆ :

Արեքաբին, որոյ մեծութիւն ի վեր է քան զմիտս, է
գունտ մի հրեղէն . ի ծագել իւրում զխաւար գիշերին
փարատէ, եւ լուսաւորէ զամենայն ինչ ճառագայթիւքն
իւրովք : Մինչ չեւ ծագեալ իցէ՝ նախընթաց իւր առա-
քէ զարլարյան եւ զաւաւօդն, եւ յորժամ մոտանէ՝ զհետ
իւր դայ երեկոյ եւ գիշեր : Սոյն այս արեգակն նուազէ եւ
մերժէ զցուրտն, չեռուցանէ զաշխարհս ամենայն, եւ տայ
ամենայնի սնունդ եւ աճումն : Ապա ուրեմն աղբիւր է
լուսոյ, եւ զերմունեան :

Գ.

Արեգակն է զի հեռանայ, եւ է զի մերձենայ, որով
չափին չորք եղանակք տարւոյն . գարսոն, ամառն, յմեռն,
աշուն : Որչափ կողմնակի անկանին ճառագայթք արե-
գական, այնչափ սակաւ է զօրութիւն նոցա առ ի զեր-

մութիւն։ Վասն այնորիկ հասարակաւուր ճառագայթք արեգական զօրաւորագոյն են քան զառաւոտուն եւ զերեկոյին։ Յորժամ լուսինն կշիռ դէպ արեգականն պատահիցէ, յայնժամ խաւարի արեգակն, եւ այս պատահէ միայն ի ծնանել լուսնի։

Դ.

Լուսին։

Լուսին իբրեւ զերկիր ընդգիմահար մարմին է, որ զլոյս իւր առնու յարեգակնէ։ Լուսատու է դիշերոյ, եւ ի լուսոյ նորա աղօտանան աստեղք, այլ անմասն է ի ջերմութենէ։ Երբեմն երեւի եւ ի տուրնջեան։ Ցանկ ի փոխման կայ լուսին։ Է զի լրանայ, եւ է զի պակասէ ի նմա լոյսն։ Եւ դարձեալ ընծայի նմա լոյս, եւ առ սակաւ սակաւ աճէ ի նմա, մինչեւ յառաջին պայծառութիւնն ի վեր ելանէ։ Լրումն լուսնի հանդիպի ի չորեքտասաներորդ աւուր, յորժամ կողմն յարեգակնէ պայծառացեալ առ մեզ ունի զհայեցուածն։

Ե.

Լուսինն գնդաձեւ է, սակայն ոչ հարթ հաւասար, այլ խորացեալ ըստ օրինակի խորոց եւ ըստ ձորոց, ըստ լերանց եւ ըստ բլոց։ Արբանեակ կամ ընկեր է երկրի, եւ շուրջ գայ զսովաւ յարեւմտից յարեւելս ի քսան եւ ինն աւուրս, եւ ի մետասան ժամն, եւ տարեւոր շրջադայութեամբ բերի զարեգակամբ։ Յորժամ երկիր կշիռ անկանիցի ընդ մէջ արեգական եւ լուսնի, խաւարի լուսին։ Այս լինի միայն ի լրանալ լուսնի։ Երբեմն ըստ մասին եւ երբեմն ամբողջ խաւարի։ Յիսուն միլիոն մղոնս հեռի է յերկրէ, եւ յիսնիւ չափ փոքր է քան զերկիր։

Զ.

Աստեղն։

Իաց ի լուսոյ անհամար պարք աստեղաց զբոլոր դիշերն լուսաւորեն, որք բաժանին յանմոլար եւ ի մոլորին։ Հաստատուն կամ անմոլար աստեղք առանձին լուսով իւրեանց լուսաւորեն, եւ բնաւ ոչ փոխեն զտեղին, յոր կառուցան յԱրարչէն։ Ի մէջ աստեղաց աստղն

Հիւսիսային միշտ ի նմին տեղւոջ երեւի : Հաստատուն աստեղք , որպէս աստեղագէտք ասեն , մի մի արեգակունք են . Եւ շուրջ զնոքօք որպէս զարեգակամբ շուրջ գան մոլորակք ումանք , զորս լուսով իւրեանց լուսաւորեն եւ ջեռուցանեն : Ծիրն այն բաղմապայծառ յարդիւն ձայնեալ , յանհամար աստեղաց խիտ առ խիտ երեւելոց ունի զտեսիլն , որ անբաւ միջոցաւ հեռի է յերկրէ :

Է .

ԵՐԵՒ :

Գնդածեւ է երկիր , վասն այսորիկ ասի եւս ոլորտ երկրի : Յայտ է ի ստուերէ երկրի տպացելոյ ի լուսինն խաւարեալ : Երկիր կիսով չափ լուսաւոր է եւ կիսով չափ խաւար : Լուսաւոր կիսագունտն՝ տիւ , իսկ խաւարն՝ գիշեր կոչի : Երես երկրի ի ջրոյ եւ ի հողոյ բաղկանայ , այլ վոքք է տարածութիւն ցամաքին քան զծովու : Եզերք նորա հինդ հազար եւ չորեքհարիւր մղոն է : Չորք են կողմանք աշխարհի . արեւելք , արեւմուտք , հիւսիս , հարաւ : Բաժանի ի հինգ դօտիս , որոց երկուքն գրեթէ անբնակ են առ սաստիկ ցրտութեան : Երկուքն բարեխառն , որպէս Հայաստան եւ Խտաղիա , եւ այլն : Եւ որ ի միջոցին է՝ սաստիկ ջերմէ , որպէս Ափրիկէ եւ Հընդկաստան : Զանազան են բերք սորա , որպէս արմտիք ի դաշտս , բոյսք ի պարտէզս , խոտք ի մարդագետինս , եւ ծառք յանտառս : Ընդ հողով գոյանան մետաղք եւ վէմք :

Ը .

ԶՈՒ :

Գտանին ի լերինս շտեմարանք ջրոյ , որք ի փեղկից լերանց քամեալք աղբերանան , եւ առ սակաւ սակաւ վտակացեալ մեծամեծ գետս գնացուցանեն : Ամենայն ջուր բնաւոր ծանրութեամբ ի վայր բերի . վասն այնորիկ տեղիք՝ ուստի աղբեւրք բղիսեն բարձր են քան յո դիմեն : Զուրն ծորելի է եւ թափանցիկ , եւ կերպարանք իրաց՝ որք ի նա անկանին , որպէս երկինք , արեգակն եւ լուսին եւ ամպք , իբրեւ ի հայելոջ տեսանին : Զուր մաքուր եւ անխառն զուրկ է ի համոյ , ի հոտոյ եւ ի գունոյ : Զուր

անձրեւոյ առաւել պտղաբեր գործէ զերկիր քան զգետոց
եւ զաղբերաց :

Թ.

Ե ջուրն բնաւորեալ է ջերմութիւն, իբր զի հե-
ղուկ է : Եւ եթէ յամենայն ջերմութենէ վերջասցի՝ սառ-
նամանիս ծնանի, որ ջերմութեամբ հալի : Նոյն բնաւո-
րական ջերմութիւն հանապաղ գոլորշիս ի վեր հա-
նէ : Խառնեալ է ընդ սմա եւ օդ, զոր պղպջակքն յե-
րեսս նորա յայտ առնեն : Ոմանք յաղբերաց ջուր ցուրտ
բղխեցուցանեն, ոմանք ջերմ, այլք դառն եւ կէսք թթու-
ի պէտս մարդկան առողջութեան : Աղի ասի ջուրն, յոր
դտանի խառնեալ հասարակաց աղ : Այսպիսի է ջուր
ծովու եւ աղբերաց ոմանց : Զրոյ դոյացութիւն կարի պի-
տանի է եւ կարեւոր : Մարդկան եւ անասնոց ըմպելի է ի
ծարաւս, զամենայն հողաբոյսս սնուցանէ եւ քաջուղէշ
առնէ, եւ բազում աղօրիս եւ մեքենայս շրջեցուցանէ :
Նովաւ կերակուրս եփեմք, եւ զմերս ամենայն լուանամք
եւ մաքրեմք :

Փ.

Ծ:

Ե այնատարած ժողով ջուրցն ծով կոչի, որ զերկիրս
շուրջանակի պատեալ ունի, եւ յառանձինն անուն «վեռ-
նո» կոչի, ուստի հանապաղ գոլորշիք ի վեր ելանեն ան-
բաւ առատութեամբ : Եւ կարի յիրաւունս . զի եթէ
չէր սպառեալ մասն ինչ ի ծովէ գոլորշիս ի վեր տալով,
ծով ոչ կարէր հանդարտել տանել ջուրց գետոց, որք
անդադար ի ծով դիմեն : Զուր ծովու աղի է եւ դառն,
որով պահի ի նեխութենէ : Վասն այնորիկ ջուր ծովու
ոչ է ըմպելի իբրեւ զջուր աղբերց եւ զգետոց : Յայն
սակս առաւել ծանր է քան զգետոցն եւ զաղբերաց, եւ ի
վերայ մկանանց իւրոց բարձեալ բերէ բեռինս ծանունս,
իբր զի նաւք դնան անհնարին մեծութեամբ եւ ծանրու-
թեամբ : Առաւել զարմանալի է առելապունիւն եւ ճակըն-
նացունիւն ծովու . զի ջուր նորա ի քսան եւ ի չորս ժա-
մու երկիցս աճէ եւ նուազէ ի ծովափունս : Եւ այս որ-
պէս կարծի ի լուսնոյ անտի ունի զպատճառն . զի ըստ

աճել նորա աճէ , եւ ըստ պակասելն պակասէ : Ի ծովու
են ծովագուան + , սորաւանդ + , իռէ + , ցամաւիղլիք + , սու-
զակոյդ + եւ ժայռ + :

ԺԱ :

ՕՐ :

ՕԵՐԿԻՐ Եւ զջուր շուրջ օդ պատէ , որ շնորհէ ամե-
նայն ազգի կենդանեաց զտուրեւառս շնչոյ , եւ առանց նո-
րա ոչ կենդանիք կարեն կեալ եւ ոչ տունկք աճել : Որ-
չափ մերձաւորագոյն է երկրի , այնչափ թանձրագոյն
գոլորշեօք լցեալ է , որ ՏՌԱՆՈՒՐ ասի : Օդն ստորին
խստագոյն է եւ ծանրագոյն քան զվերինն եւ զհեռագոյնն
յերկրէ : Օդն լցծ է եւ թափանցիկ , եւ ի վերայ ամե-
նայնի ունի եւ ոյժ առաձգական . զի թէպէտ ներէ սեղ-
մել , բայց իբրեւ ազատանայ ի բոնութենէն՝ սաստիկ յար-
ձակմամբ յառաջին անգայտութիւնն ի վեր ելանէ : Ցըր-
տութեամբ սեղմի եւ խտանայ , եւ ջերմութեամբ անգայ-
տի եւ ծաւալի , եւ որչափ բարձր է , այնչափ ցրտագոյն է :

ԺԲ .

Օդն երբեմն պարզ լինի եւ երբեմն անձրեւէ . յա-
մարայնի ջերմ է , եւ ի ձմերայնի ցուրտ : Իսկ ի գարնայ-
նի եւ յաշնայնի բարեխառն : Ոչ երբեք պարզի , այլ միշտ
խառն է ընդ աղի եւ ծծմբոյ եւ ընդ այլ տարերաց մա-
սունս : Որչափ մաքուր է օդ , այնչափ առողջարար է :
Օդն թեթեւագոյն ի վեր բերի քան զծանր , որպէս իւղ
յերեսս ջրոյ : Ընդ օդ ճանապարհ գործէ ձայնն , եւ որ-
չափ մաքուր է եւ խաղաղ , այնչափ առաւել յստակ լսի
ձայնն : Դարձեալ ցնդի ձայնն ի թանձր եւ ի խոնաւա-
կան մասանց յօդս ճախրելոց : Աըստանէ ասի բացա-
դանչութիւն օդոյ . իբր զի ուր ընդդիմահար մարմնոյ պա-
տահէ , անդրէն ընդ կրունկն դառնայ , յորմէ նոյն ձայն
ազդէ յականցս խօսողին : Յօդս գոյանան ամոլ , անյըւ-
նան , քայլան , իայծան , ծիածան եւ այլ մերկորայտ .

ԺԳ .

ՀԱՂՄ :

Օդն հազիւ երբեք հանդարտի , այլ գրեթէ միշտ
ի շարժման կայ : Շարժումն օդոյ սաստիկ հնչելոյ՝ հաղմ

ասի , իսկ հեղիկ հնչեալ՝ ուր անուանի : Չոք են
զլխաւոր հողմունք , որք շնչեն ի ըորից կողմանց աշխար-
հի : Աղաբերձաւ որ եւ պորեաս շնչէ ի հիւսիսոյ , աղեւ-
նո՞ւ կամ եւրո՞ւ յարեւելից , նորո՞ւ ի հարաւոյ , վեդեւ-
յարեւմտից : Հիւսիսային շնչմունք ցրտագին են քան զայլ
ամենայն հողմունս . հարաւ ըստ առաւել մասին գաղջ
է . արեւմուտք խոնաւ . եւ արեւելք չոր : Հողմունք բազ-
մապատիկ օգտակարութիւնս ունին . մաքրեն զօդն ի
վեասակար գոլորշեաց . բարեխառնեն զտապ խորշակին
եւ զբազում ախտից պատճառս կարծեն : Արեն զամաս
եւ այսր անգր տարաբերեն . եւ յետ ձմերայնոյն անցա-
նելոյ՝ լուծանեն զձիւնս . եւ զերկիր բազում անձրեւօք
ուոգեալ՝ վաղ քան զարեգակն դիտեն ցամաքեցուցանել .
նաւս վարեն , եւ աղօրիս շարժեն : Բայց երբեմն վեաս
գործեն : Մրրիկ երբեմն զծառս յարմատոց խլէ , զշէնս
կործանէ , եւ զնաւս ի նաւաբեկութեան վտանգ արկեալ՝
բազում անգամ եւ խորտակէ : Բոնութիւն հողմոյ ան-
դընդայնոյ է պատճառ երկրի սասանան , որ բազում ան-
գամ ի բազում տեղիս զքաղաքս եւ զգիւղս հիմն ի վեր
տապալեաց :

ԺԳ.

ՀԱՅ :

Հուրն է պատճառլուսոյ եւ զերմութեան . լուսա-
ւորէ , զեռուցանէ , խանձէ եւ այրէ : Երբեմն բորբոքի
հուր արագ արագ շփմամբ դիւրավառ նիւթոց : Այրեն
եւ ճառագայթք արեգական եթէ գոգաւոր ապակւով ի մի
ժողովիցին : Հասարակօրէն հուր վառեն՝ զվէմ գայլա-
խազ ընդ պողովպատի հարեալ : Փայտն վառեալ՝ ծխէ ,
իսկ մնացեալն յաճիւն դառնայ : Բազում պինդ մարմինս
դիտէ հուր հեղուկ գործել , որպէս զոսկին , զարծաթն եւ
զայլ մետաղս : Հուրն՝ ճարակի կարօտանայ եւ օդոյ վչե-
լոյ , ապա թէ ոչ՝ շիջանի : Ի տարերս թեթեւագոյն է
քան զամենեսին :

ԺԵ.

ԼՈՅ :

Ի հրոյ գոյանայ լոյս , զոր հուրն ընդ ամենայն կողմն
ծաւալէ : Զօրութիւն լուսոյ յերկուս առաւելապէս փայլէ :

Նախ՝ զի միայն լուսով կարեմք տեսանել. եւ երկրորդ՝ զգոյնս որոշել ի միմեանց : Քանզի ուր չեք լսյս, խաւարն ի վերայ հասեալ՝ դոյնք անհետանան : Լոյսն քան զամենայն ինչ, եւս եւ քան զձայն արագ ընթանայ : Ճառագայթք արեգական միշտ ուղղաձիգ բերին եւ ոչ երբեք խոտորին, բայց եթէ յորժամ յանդայտ մարմնոյ ի թանձր հասանեն, որպէս յորժամ յօդոյ ի ջուր դան մտանեն : Զի ի լինել այսմ այսպէս՝ բեկբեկին ճառագայթք արեգական, եւ դաւազան ի ջուր միսեալ՝ խորտակեալ երեւի :

ՓԶ.

ԳԱՅՐԵՆՔ :

Յ երմութիւն արեգական ժողովէ ի ծովէ, ի գետոց եւ յաղբերաց անբաւ գոլորշիս, որք ի վերելս ցնդեալ պակասին : Այս գոլորշիք ի ցրտութենէ վերին օդոյ ի մի ժողովին եւ խտանան, որով եւ երեւելի լինի աչաց մերոց . եւ եթէ տարածեսցի ի վերայ երկրի, հասարակ ձայնիւ . Առ կոչի . եթէ վերանայ յօդն՝ ամո անուանի :

ՓԷ.

Ա. Տ. , անյըշե- , յիշ- , իարիու- եւ այլն :

Եթէ մէզն տարածեսցի ի վերայ երկրի՝ նշան է օդոյ պարզելոյ . այլ եթէ ի վեր յօդս ելցէ, նշան է անձրեւոյ : Յաշնանային եւ ի գարնանային եղանակս ընդ առաւօտս եւ ընդ երէկս մէզք յաճախեն, մանաւանդ ի ջրարբի տեղիս : Եթէ գոլորշիք յօդս սառին ի ցրտոյ, յիշ ծնանի : Եթէ սառուցեալ անձրեւ ի ցրտութենէ վերին օդոյն՝ իսկոյն անկցի ի ստորին օդ ջերմ, իարիու- լինի : Վասն այնորիկ յամարայնի կարկտէ, եւ ի ձմերայնի ձիւնէ : Ցօղն պատճառի ի շոգեաց երկրի եւ տնկոց, որք ընդ առաւօտս եւ ընդ երեկս խտացեալ ի կայլակս կայլակս ժողովին : Եթէ ցօղն զցուրտ մարմնովք սառի, Եղեան անուանի :

ՓԸ.

Փայլանն, իայծակունի+, եւ այլն :

Ի աց ի ջրային գոլորշեաց ելանեն նաեւ ծծմբային գոլորշիք խառնեալք ի ծծմբոյ եւ յարջասպէ . ուստի եւ

փայլատակունք ծնանին : Փայլակն երեւի ի խիտ եւ ի լրթագոյն ամպոց, եւ բազում անգամ ճայթիւնս գործէ աշաղին որոտմամբ, թէպէտ յամր հասանէ ձայնն յականջս մեր, կամ բնաւ ամենեւին ոչ լսի : Զի որչափ հեռի է ի մէնջ փայլակն, այնչափ անագան հասանէ եւ հնչիւն որոտման : Կայծակն բազում օգտակարութիւնս մատակարարէ յաշխարհս, զի մաքրէ եւ զովացուցանէ զօդն, եւ զվասսակարս գոլորշեաց ծախէ : Բազում անգամ վեասէ եւս, զի հրծիգ առնէ, հերձանէ եւ մանրէ զծառս, եւ զմարդիկ եւ զանասունս արագագոյն քան զքթթել մի ական հեղձամղձուկ մահուամբ կարճէ ի կենաց : Յամարայնի յաճախ փայլատակէ եւ որոտայ :

ԺԹ.

Այլ մետեռբայ+ :

Են եւ այլ ի հրոյ ձեւացեալ տեսիլք եւ մետէորայք, որք ոչինչ ճայթիւնս գործեն . որպէս վիշապք թոռցեալք եւ աստեղք սահեալք, որք ծնանին ի պարարտ գոլորշեաց երկրի : Մուկ հուր ի ծախին վայրս երեւի : Ծիածան կամ աղեղն ձդի յամպս յաւուրս անձրեւաց, յորժամ արեգակն ի հանդիպոյ ծագէ : Վասն այնորիկ յառաւօտու ծիածանն նկարի յարեւմուտս, եւ յերեկոյի՝ յարեւելս :

Ի.

Լէրին+ :

Յերեսս երկրի են լերինք բարձունք, բլուրք ամբարձեալք, եւ խորին ձորք : Բլուր ասի փոքրիկ եւ խոնարհ լեառն : Որչափ բարձր են լերինք, նոյնչափ առաւել խորին ձորս ունին : Լեառն Դաստղիքը բարձր է քան զամենայն լերինս ի վերին կիսագունան, իսկ ի ներքինն՝ այս ինքն յԱմերիկա՝ Բերումբան լէրին+ : Գագաթն լերանց բարձանց նաեւ ի ջերմ գաւառս պատի միշտ սաստկութեամբ սառնամանեաց, որպէս Աղպետյ լերինք : Են եւ լերինք ինչ, որոց կատարն հրով տոչորի . որպէս Ետնա ի Սիկիղիա, եւ Վեսուվ ի Նեապոլիս : Լերինք բազում օգուտ մատակարարեն յաշխարհս, անտի քամեալ ժողովին առուք, աղբերք եւ գետք եւ անտի

պեղեն զամենայն ազգս հանքաց : Ունին խոտս առողջարարս : Սանձեն զանկարդ հողմոց շնչել, եւ բարեխառնեն զխորշակին սաստկութիւն :

ԻԱ.

ՄԵԴՐԱԿ :

Օմետաղս ի լերանց հատանեն, յորոց ոմանք պատուակն ասին, եւ ոմանքն անարժ : Պատուական է ոսկին, արծաթն, անարդ է երկաթն, պղինձն, անագն, կապարն եւ սնդիկն : Ոսկին՝ որ քան զամենայն մետաղս ծանր է եւ պատուական, ոչ միայն ի լերինս, այլ եւ ի գետս գտանի : Ոսկեգործք ոսկի եւ արծաթի դրամ հատանեն, եւ ազգի ազգի զարդս քանդակեն : Երկաթն՝ յորմէ բազում ինչ ի բարւոք պէտս կաղմեն, գտանի ի բազում կողմանս : Պողովպատն է երկաթ հրացեալ, եւ ի ջուր թացեալ : Ի պղնձոյ եւ յանագէ զանաղան անօթս հանդերձեն . մանաւանդ պղնձի անօթ անագեալ՝ ժանդիւ ոչ ապականի : Զկապարն, որ կակուղ է քան զայլ ամենայն մետաղս, դիւրին է հրով հալել :

ԻԲ.

ՔԱՐՔԻՆ :

Վարինք յազդս ազգս բաժանին : Ոմանք հասարակ են, ոմանք սակաւագիւտ, եւ ոմանք պատուական : Հասարակ են վէմք, գայլախազ քար, եւ այլն : Սակաւագիւտ է մագնիս, ապակի, մարմարիոն : Պատուական՝ ակունքն : Շինուած որմոց, տանց եւ քաղաքաց հասարակ քարանց պիտոյանայ ի կատարումն : Յեսանաւ սրեն զբժացեալ դանակ, զածելի, եւ այլն : Գայլախազ վէմընդ պողովպատի հարեալ՝ կայծակունս թօթափիէ : Մագնիս քարն զարմանալին քան զամենեսեան, զերկաթ յինքն ձգէ, եւ սերտ ընդ նմա կապի : Զայս զօրութիւն բնաւորական հաղորդէ եւ երկաթոյ : Եթէ աղատ թողցի, միշտ ընդ հիւսիս բերի, եւ նաւավարաց յանհետ ծովուզգուշաւոր շաւիղ ցուցանէ :

ԻԳ.

Վապակին քար է թափանցիկ եւ սերտ : Մարմարիոնն կամ սպիտակ է, կամ երփն երփն գունաւորութեամբ

սլիսակացեալ։ Սաթ ի ծովու դոյանայ։ Ակունք գտեալք
ի հող, ամենեւին ոչ փողփողեն։ այլ ձեռն արուեստա-
դետ ճարտարաց սրեալ, ընդ ուկի յեռեալ պայծառ
երեւեցուցանէ։ Կամ թափանցիկ են եւ կամ ընդդիմա-
հար։ որպէս զմրուխտ կանաչ, յակինթ կարմիր, տպա-
զիոն դեղին, եւ այլն։ Այլ պատուականագոյն եւ ան-
վանելի է քան զամենայն՝ անդամանդ, որ պայծառ ճա-
ռագայթիւք եւ երին երին հարկանելով զաչս տե-
սողացն զօշոտէ։ Սակայն երկանաքար օգտակարութեամբ
դերազանցէ զամենեքումբք։

Ի՞Ւ.

Տունի+ :

Ամենայն տունկք երիս մասունս ունին արմադա,
բունս եւ սսդա։ Ոստքն ի բունոյ շառաւիղեն, որ ի
փոքրիկ եւ ի փափուկ բանջարս՝ ծովակամ ծէլ կոչի։
Ոստքն բերեն պտուկս, սաղարթս, տերեւս, ծաղիկս,
պտուղս եւ սերմանս։ Արտաքուստ կեղեւով պատին,
իսկ ի ներքս ի բունն է ուղեղ տնկոց։ Արմատք տնկոց
ընդ հողով ծածկին, ուստի զխոնաւութիւնն ի վեր ծծեն,
որ մնուցանէ զբոյսն։ Բայց ոչ յարմատոյ միայն մնանին՝
զհիւթն ի վեր բերելով, այլ նաեւ ընդ ծակտիս տե-
րեւոց ձգեն զօդն, վասն այնորիկ առանց տերեւոյ ոչինչ
պտուղ հասունանալ կարէ։ Ծառք բաղմանան կամ ի
սերմանէ կամ ի շառաւիղէ եւ կամ յարմատոյ։ Ոչ
ամենայն տունկ յամենայն տեղիս աճէ։

ԻԵ.

Ծառ+ :

Ծառք կամ պտղաբեր են եւ կամ անպտուղ։
Պտղաբերք են խնձորենի, տանձենի, կեռասենի, սալո-
րենի, նոնենի, ընկուղի, դեղձի, ծիրանի, եւ այլն։
Անպտուղք են եղեւին, գի, սաւճի, կաղամախ, հացի,
ուռի։ Վայրենիք ինքնին բուսանին, իսկ պտղաբերք
մարդկային խնամոց պէտս ունին։ Յաշնանային եղանակս
տերեւք ծառոց ինչ թօթափին, որպէս խնձորենւոյ, եւ
այլն, եւ այլոց անթառամ մնան, որպէս դափնւոյն եւ

Եղեւնափայտին եւ այլոց բազմաց։ Փայտ ծառոց կամ ի շինուածս պատշաճի, եւ կամ յայրումն պատրաստի։

Ի՞Զ.

ԱՐԴՐԵՒ :

Ի բերս երկրի օգտակարագոյն մարդկան համարին արմտիք, յորոց կէսքն կանուխ, եւ կէսքն անագան հասունանան։ Կանուխ ասի զոր յաշնայնի սերմաննեալ յամարայնի ի գալ ամին հնձեն, որպէս ցորեան, հաճար եւ այլն։ Անագան ասի, զոր ի գարնայնի սերմաննեն, որպէս վարսակ, գարի, կորեակ եւ ձիակորեակ։ Ի կարդ սոցադասին բակլայ, ոսպն, լուրիա, սիսեռն եւ այլն։ Որպէս զի երկիր պտղաբեր լիցի, աղըս արկաննեն։ Յետոյ արօրադիր առնեն, սերմաննեն եւ տափաննեն։ Իբրեւ հունձք ատոքանան, մանգաղաւ հնձեն, եւ ի շտեմարանս ժողովեն։

Ի՞Ւ.

ԾԱՌՀՈՒՆԻՒ :

Որպէս արմտիք կարգեցան յարարչեն ի պէտս մարդկան դարմանոյ, նոյնպէս ծաղկանց ամենահրաշ զանազանութիւնք պատրաստեցան ի զուարճութիւն աչաց եւ ի բուրումն անուշահոտութեան ի վայելս մարդկան ազգի։ Ծաղկանց առ մեզ յաճախելոց ի բուրաստանս եւ յառտնին զբօսանս՝ բազում են տեսակիք, բայց գլխաւորք ի նոսա գեղեցկութեամբ են. շահպրակ, վարդ, շուշան, կակաչ, յակինթ ծաղիկ, շահոքրամ։ Շահպրակ յառաջ քան զամենայն ծաղկունս աւետէ զգարունն։ Վարդից բազում են տեսակիք զանազաննեալք ի տերեւս, ի գոյնն եւ ի հոտն։ Շուշան սքանչելի բուրմամբ եւ պայծառ գունով վառեալ՝ պատմէ զԱրարչին գեղեցկութենէ եւ զանպակաս խնամոց նորա։ Բազումք ի ծաղկանց հոտ անոյշ բուրեն։ Եւ կէսք առ աչս միայն ունին զշնորհն, որպէս կակաչ, որ ամեննեւին հոտ ոչ բուրէ։



Ց Ա Կ

ՀԵՐԱԿՈՐ ԳՏՏԵԼԵՍՅ

Ածական անուն	23	133
Ածանցական անուն	133
Անեղական անուն	5
Աներեւոյթ բայ	222
Անկանոն բայ	93
Անկատար ժամանակ	44
Անուն	133
Անուն բայի	164	166
Անցեալ ժամանակ	44
Անցողական բայ	71
Ապառնի ժամանակ	44
Առողանութիւն	249
Արդելիչ խնդրոյ	224
Բաղադրեալ անուն	136
Բաղդատական ածական	134	200
Բայ	43
Բայանուն	230
Բարդ անուն	136
Բարձր շարագրութիւն	242
Բացայայտիչ, Բացայայտեալ	163	189
Բացառական հոլով	182
Բութ	250
Գերադրական ածական	134	202
Գերակատար ժամանակ	44
Գիր	1
Գոյական անուն	133
Գործիական հոլով	183
Դերանուն	.	.	.	34	151	209
Դէմք բայից	44
Դէմք դերանուանց	34
Դիմազուրկ բայ	.	.	.	109	170	224


Դիմուոշ յօդք	156	.	215	
Դրական ածական	134	
Ենթամնայ	252	
Երկորեակ	252	
Զարտուղի բայ	93	
Էական բայ	45	.	191	
Էտկան դերանուն	34	.	151	
Ընդունելութիւն եալ	227	
Ընդունելութիւն լէ	227	
Ընդունելութիւն լց	228	
Ընդունելութիւն ող կամ օղ	226	
Թիւ անուանց	2	.	136	
Թիւ բայից	44	
Թուական անուն	27	.	143	
Ժամանակ բայից	44	
Լծորդութիւն բայից	45	
Լուծումն շարադրութեան	238	
Խնդիր բազդատական անուանց	200	
Խնդիր բայանուանց	230	
Խնդիր բայի	164	
Խնդիր բնութեան	186	
Խնդիր էական բայից	192	
Խնդիր մասնական անուան	206	
Խնդիր սեռի կրաւորական բայից	218	
Խնդիր սեռի ներգործական բայից	180	
Խոնարհմունք բայից	44	
Կատարեալ ժամանակ	44	
Կէտ	250	
Կոչական հոլով	185	
Կրաւորական բայ	43	
Կրկնական թուականք	30	.	147	
Համաձայնութիւն մասանց բանի	163	
Համաձայնութիւն ածականաց ընդ դպյականս	203	
Հայցական հոլով	180	.	194	.	219
Հասարակ բայ	43	
Հարցական դերանուն	32	.	156	

Հարցումնի	166
Հոլովմունք անուանց	3	138—143	
Հոլովումն ածականաց ընդ գոյականս	23	
Հոլովք անուանց	2	
Չեւ անուանց	136	
Չայնակրական բայ	44	
Ճոխ շարագրութիւն	242	
Մակակէտ	252	
Մակրայ	118	235	
Մասնական անուն	31	147	206	
Մասունք բանի	1	163	
Միջակ շարագրութիւն	243	
Միջարկութիւն	132	
Յատկացուցիչ, Յատկացեալ	163	171	
Յատուկ անուն	5	18	
Յարաբերական դերանուն	41	210	
Յարակատար ժամանակ	44	
Նախադրութիւն	111	
Նախդրիւ տրական	2	178	
Ներգոյական հոլով	183	195	
Ներգործական բայ	43	158	
Ներգործակերպ չէղոք	44	
Ներկայ ժամանակ	44	
Շաղկապ	126	
Շարադրութիւն	241	
Շեշտ	249	
Ուղղագրութիւն	249	
Ուղղական հոլով	166	193	
Չեղոք բայ	43	
Պակասաւոր բայք	101	
Պատմական հոլով	186	
Պատիւ	252	
Պատուագիր	252	
Պարագայք անուանց	136	
Պարագայք բայից	43	
Պարառական հոլով	186	

024

Պարզ անուն						136
Պարզ շարադրութիւն						241
Պարոյկ						250
Սեռական հոլով					171	193
Սեռք բայից					43	158
Ստացական դերանուն					40	155
Ստորագասական եղանակ						159
Ստորակէտ						250
Վերծանութիւն						249
Վերջակէտ						250
Վերջահոլով արական					3	177
Տրական հոլով					3	177
Տրոհութիւն						250
Ցուցական դերանուն					37	154
Փակագիծ						252

— • ՀՅՈՒՅՑ • —



2n.

